

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկատվություն	Էջ4
2. Օգտագործվող հապավումներ	Էջ4
3. Հավելվածներ	Էջ5
4.Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը	Էջ5-9
5. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը	Էջ10
6. Նախատեսվող գործունեության անվանումը	Էջ10
7. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը	Էջ10
7.1 Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի սկարագիրը	Էջ11
8. Նախատեսվող գործունեության տարածաշրջանի և «Դիվիզան» ազգային պարկի շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը	Էջ13
8.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը	Էջ13
8.2. Սեյսմիկա և երկրաբանություն	Էջ14
8.3. Կլիման և օդային ավազանի իրավիճակը	Էջ15
8.4. Հողային ռեսուրսներ	Էջ16
8.5 Ջրային ռեսուրսներ	Էջ16
8.6 Կենսաբազմազանություն	Էջ16
8.7 Պատմամշակութային հուշարձաններ	Էջ17
8.8 «Դիվիզան» ազգային պարկ	Էջ19
9. Նախատեսվող գործունեության բնութագիրը և տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ	Էջ33
9.1. Նախատեսվող գործողության սկարագիրը և տեխնիկատեխնոլոգիական լուծումները	Էջ33
10. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր	Էջ38
10.1 Ջրային ռեսուրսներ	Էջ38
10.2 Կեղտաջրերի հեռացում	Էջ39
10.3 Նյութեր	Էջ41
10.4 Հողային ռեսուրսներ	Էջ41
10.5 Կենսաբազմազանություն	Էջ41
10.6 Թափոնների առաջացում	Էջ42
10.7 Սոցիալական	Էջ42
10.8 Բարեկարգում	Էջ43
11. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը	Էջ45
11.1 Օդային ավազան	Էջ46
11.2 Հողային ռեսուրսներ	Էջ46
11.3 Ջրային ռեսուրսներ	Էջ47
11.4 Կենսաբազմազանություն	Էջ48
11.5 Թափոններ	Էջ48

11.6 Աղմուկ և թրթռում-----	Էջ49
11.7 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն-----	Էջ49
11.8 Սոցիալական-----	Էջ50
11.9 Լանդշաֆտ և տարածքի բարեկարգում-----	Էջ50
12. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան-----	Էջ51
Գրականություն-----	Էջ63

1. Ընդհանուր տեղեկատվություն

Հայտ	Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ք. Դիլիջան «Դիլիջան» ազգային պարկի տեղամաս 1-ին քառ. 9 անտառամասի տարածքում հանգստի գոտու կազմակերպում
Ձեռնարկող	«ՀԱՅԿ ԵՎ ՌԱՖԱՅԵԼ» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	Ք.Երևան, Շիրազի փ, գ-1 թաղ. 7/10
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն	Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ք. Դիլիջան «Դիլիջան» ազգային պարկի տեղամաս 1-ին քառ. 9 անտառամասի տարածք
Ձեռնարկողի հեռախոս, էլեկտրոնային փոստ	vakkomitas@mail.ru հեռ. 091/11-11-71
Պատվիրատու	«ՀԱՅԿ ԵՎ ՌԱՖԱՅԵԼ» ՍՊԸ
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը	Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ք. Դիլիջան «Դիլիջան» ազգային պարկի տեղամաս, 1-ին քառ. 9 անտառամասի տարածք
Աշխատանքային նախագծի մշակող	«ՀԱՅԿ ԵՎ ՌԱՖԱՅԵԼ» ՍՊԸ
Գնահատման հայտի նախագծող	ArmEIA «Նովալ» ՍՊԸ
Հայտի մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Բրյուսովի 6 (012)21-10-01,(093)39-77-60 arm_eia@outlook.com

2. Օգտագործվող հապավումները

ՇՄԱԳ՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

ԲՀՊՏ՝ Բնության հատուկ պահպանվող տարածք

ԲՀՀ՝ Բնության համաշխարհային հիմնադրամ

ԲՊՄՄ՝ Բնության Պահպանության Միջազգային Միություն

- ՍՊԸ՝** Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ԱՊ՝** Ազգային պարկ
- ՊՈԱԿ՝** Պետական ոչ առևտրային կազմակերպություն
- ՊՏ՝** Պահպանվող տարածք
- ԴԱՊ՝** «Դիլիջան» Ազգային պարկ
- ԿՊ՝** «Դիլիջան» ազգային պարկի Կառավարման պլան

3. Հավելվածներ

- Հավելված 1. Տարածքի սեփականության իրավունքի վկայականները
- Հավելված 2. Ճարտարապետահատակագծային առաջադրանքները
- Հավելված 3. Վարձակալության պայմանագիրը /սվիրատվություն/
- Հավելված 4. Դիլիջանի քաղաքաշինական և ներդրումների խրախուսման խորհրդի դրական եզրակացությունը
- Հավելված 5. Գործունեության ենթակա տարածքի կոորդինատները
- Հավելված 6. Հուշարձանների ցանկը
- Հավելված 7. Աղբահեռացման պայմանագիրը
- Հավելված 8. Էլեկտրամատակարարման պայմանագիրը
- Հավելված 9. Գազամատակարարման պայմանագիրը
- Հավելված 10. Ջրահեռացման տեխնիկական պայմանը
- Հավելված 11. Մաքրման կայանի սխեմա
- Հավելված 12. Հանրային քննարկման արձանագրություն, տեսաձայնագրություն, մասնակիցների ցանկը
- Հավելված 13. Դիլիջանի համայնքապետարանի քաղաքապետարանի նախնական համաձայնությունը

4. Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) – կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 3 կատեգորիա՝ «Ա», «Բ», «Գ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (2006 թ.) - կարգավորում է ՀՀ-ում բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող Էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.) – կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունները: Նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա վնասակար ներգործությունները, ինչպես նաև իրականացնել միջազգային համագործակցություն՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում: Համաձայն օրենքի՝ իրականացվում է մթնոլորտային օդի պահպանության համալիր միջոցառումների ծրագրի հաստատումը, սահմանվում է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները, մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների մշակման ու հաստատման, արտանետումների պետական հաշվառման կարգերը և այլն:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) – սահմանում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.) – ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն

հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.) – սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) - սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպատիրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002) – Նպատակն է ազգային ջրային պաշարի պահպանությունը, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարումը, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովումը, ինչպես նաև սույն օրենսգրքի խնդիրների լուծման համար իրավական հիմքերի ապահովումը: Կարգավորում է ջրային հարաբերությունները, Սևանա լճի կառավարման և պահպանության հարցերը: Ապահովում է ջրերի պահպանությունը, պաշտպանությունը վնասակար ազդեցությունից, օգտագործումը հանրության շահերի համար՝ հանուն բոլոր անձանց անվտանգության:

«Հողերի օգտագործման եվ պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.) - սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում

առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«2015 թվականի հունիսի 23-ին ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՐԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենք - ապահովում է Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքային բնակավայրի զարգացման և ներդրումային ծրագրերի խրախուսման ու իրականացման նպատակով ներդրումային ծրագրերի հաստատման և իրականացման կարգը, ինչպես նաև Դիլիջան համայնքի քաղաքաշինական փաստաթղթերի մշակման, քննարկման և հաստատման, քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները, տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները՝ Դիլիջան համայնքի քաղաքաշինական և ճարտարապետական միասնական և համահունչ սկզբունքների կիրառումը, կառուցապատման գործունեության իրականացումը առողջ և գրավիչ կենսամիջավայրի ձևավորման համար:

ՀՀ կառավարության որոշումներ

- ❖ ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշում՝ «Հանրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» :
- ❖ ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում՝ «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» :
- ❖ ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում՝ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
- ❖ ՀՀ կառավարության 14.08.2008թ. N 967-Ն որոշում՝ «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:
- ❖ ՀՀ կառավարության 02.11.2017թ. N1404-Ն որոշում՝ «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» :
- ❖ ՀՀ կառավարության 08.11.2011թ. N1396 որոշում՝ «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» :
- ❖ ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշում՝ «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»:
- ❖ ՀՀ կառավարության 30.12.2004թ. N1929 - Ն որոշում՝ «ՀՀ Տավուշի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին»:

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի /այսուհետ ֕րենք/ համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հիմնական պահանջները սահմանված են 21.06.2014թ.-ին ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները:

Համաձայն ֕րենքի, գործունեությունները դասակարգվում են 3 կատեգորիաների՝ Ա, Բ և Գ: «ԴԻԼԻԶԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊՈԱԿ-ին պատկանող «Դիլիջան» ազգային պարկի տեղամաս 1-ին քառ. 9 անտառամասի տարածքում հանգստի գոտու կառուցապատման նախատեսվող գործունեությունը համաձայն ֕րենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 8-րդ կետի համարվում է թվարկված գործունեություն, ներառված է Գ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության ենթակա է Գ կատեգորիայի ընթացակարգով, այս դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության է ենթակա նախնական գնահատման հայտը:

Համաձայն ֕րենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի փորձաքննության ներկայացվող նախնական գնահատման հայտը պարունակում է՝

- 1) ձեռնարկողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.
- 2) նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը.
- 3) նախատեսվող գործունեության ենթակա տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը և իրադրության սխեման.
- 4) նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).
- 5) շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը.
- 6) տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լուծումների և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

Հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվել են ՀՀ կառավարության 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի պահանջներին համապատասխան՝ Տավուշի մարզ Դիլիջան քաղաքում համայնքում, որի վերաբերյալ համայնքը տվել է դրական կարծիք:

Նախնական գնահատման հայտի հիման վրա, ֕րենքի 16-րդ հոդվածով սահմանված կարգով՝ նախատեսվող գործունեության վերաբերյալ ձեռնարկողին տրամադրվում է եզրակացություն:

Միաժամանակ նախատեսվող գործունեությունը համարվելով բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիա), նախագիծը ենթակա է պետական համալիր փորձաքննության,

համաձայն՝ ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի N 596-Ն որոշման N 2 հավելվածի 13-րդ և 15. 1 կետերի:

5. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը.

«Դիլիջան» ԱՊ-ի տարածքում հանգստի գոտու կազմակերպումն իրականացնում է «ՀԱՅԿ ԵՎ ՌԱՖԱՅԵԼ» ՍՊ ընկերությունը, որի իրավաբանական հասցեն է՝ Երևան, Շիրազի փ, գ-1 թաղ. 7/10: Գործունեության իրականացման համար աշխատանքային նախագիծը մշակվել է «ՀԱՅԿ ԵՎ ՌԱՖԱՅԵԼ» ՍՊ ընկերության կողմից՝ համապատասխան մասնագետների ներգրավմամբ: Նախագծման համար հիմք է հանդիսացել Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի կողմից 2020թ. հուլիսի 29-ին ընկերությանը տրված՝ Դիլիջան քաղաքի «Դիլիջան» տեղամաս 1-ին քառ. 9 անտառամաս տարածքում հանգստի գոտու կառուցման՝ ՈԱ1-44 և ՈԱ1-45 նախագծման թույլտվությունները (ճարտարապետահատակագծային առաջադրանքերը): **Հավելված 2**

Առկա է Դիլիջանի համայնքի ղեկավարին կից հասարակական հիմունքներով մշտապես գործող Դիլիջանի քաղաքաշինական և ներդրումների խրախուսման խորհրդի դրական եզրակացությունը: **Հավելված 4.**

6. Նախատեսվող գործունեության նպատակը.

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում հանգստի գոտու կազմակերպման նպատակն է կառուցել քոթեջային տիպի հանգստի գոտի՝ համապատասխան ենթակառուցվածքներով և պայմաններով, բնակչության երկարաժամկետ և կարճաժամկետ հանգիստն անցկացնելու համար:

Տարածքի ճարտարապետական լուծումները՝ դիրքը և վայրը, հնարավորություն կստեղծեն, թե զբոսաշրջիկներին և թե տեղացիներին իրենց հանգիստը կազմակերպել բնության գրկում:

Համաձայն «Դիլիջան» ԱՊ-ի և «Դիլիջան» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊՈԱԿ-ի կանոնադրության՝ կազմակերպությունն իրավունք ունի ռեկրեացիայի նպատակով իր տարածքում՝ հողերը սահմանված կարգով վարձակալության տրամադրել՝ քաղաքացիների երկարատև և կարճատև հանգիստը կազմակերպելու համար:

7. Նախատեսվող գործունեության ենթակա տարածք

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը գտնվում է Դիլիջան համայնքի վարչական՝ «Դիլիջան» ազգային պարկի տարածքում: Գործունեությունն իրականացվելու է Դիլիջան համայնքի, Դիլիջան քաղաք «Դիլիջան» տեղամաս 1-ին քառ. 9 անտառամաս տարածքում, վարձակալության հիմունքներով՝ 0,298223հա (1-ին հողակտոր) և 0,223հա(2-րդ հողակտոր) մակերեսներ ունեցող երկու հողամասերում: **Հավելված 3.**

Հողատարածքները սեփականության իրավունքով, նվիրատվության պայմանագրով, և մինչև 2060թ. դեկտեմբերի 31-ը ժամկետով, տրված են «ՀԱՅԿ ԵՎ ՌԱՖԱՅԵԼ» ՍՊ ընկերությանը, որն ամրագրված է ծածկագիր՝ 11-003-674-0082 (0,298223հա) և 11-003-0674-0083(0,223հա) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի վկայականներով:

Հավելված 1.

Նախատեսվող տարածքի հողերի նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող է, գործառնական նշանակությունը՝ հանգստի համար նախատեսված հողատեսքեր են:



Նկար 1.

Համաձայն վարձակալության պայմանագրի (հավելված 1) արգելվում է տարածքում ցանկացած տիպի ծառահատումները, բույսերի և կենդանիների նոր տեսակների ներմուծումը և կլիմայավարժեցումը, վնասատուների դեմ պայքարի նպատակով թունաքիմիկատների, ինչպես նաև հողերի պարարտացման նպատակով պարարտանյութերի օգտագործումը: Միաժամանակ չի թույլատրվում հողամասի այնպիսի փոփոխություն, որը կհանգեցնի հողի որակական հատկանիշների վատթարացմանը:

7. 1 Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը

Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի վարչական տարածքում, դեպի Պարզ լիճ տանող ասֆալտապատ ճանապարհի հարևանությամբ(աջակողմյան):

Համաձայն համայնքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային լուծումներում ներառված պահանջի՝ ընկերության կողմից կատարվել են ՀՀ Տավուշի մարզ, ք. Դիլիջան, «Դիլիջան» տեղ, 1-ին քառ. 9 անտառամասի տարածքի երկրաբանական հետախուզություն: Հետազննման համար ուսումնասիրվող տարածքում փորվել է մինչև 3.0 մ խորությամբ 1 հատ շուրֆ: Համաձայն հետազոտման արդյունքների՝ տեղամասում ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում է 1342.0 մետրի սահմաններում: Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են օլիգոցենի, հասակի կավային և կրաքարային ապարները:

Ուսումնասիրվող տեղամասում նախագծվող շինությունն կառուցելու համար, որպես հիմնատակ ծառայելու է շերտ 1-ը՝ պինդ կավավազային գրունտը: Գրունտների սեյսմիկ հատկությունների ճշգրտումը կատարվել է երկրաֆիզիկական հետազոտությունների հիման վրա: Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի, ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի՝ ուսումնասիրվող տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ $A_{max}=0,3g$ և ունի 8-9 բալ սեյսմիկայնություն: Գրունտի սառման առավելագույն խորությունը ուսումնասիրվող տարածքում կազմում է 47 սմ: Տեղամասում ստորերկրյա ջրեր չեն հայտնաբերվել:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը բացակայում են: Ուստի ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ կատարելու համար:

Նախատեսվող գործունեության տարածքը կառուցապատված չէ: Տարածքում բացակայում են ինժեներական ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման համակարգերը: Տարածքում առկա է միայն էլեկտրամատակարարման համակարգը:

Գործունեության ենթակա տարածքների հողային տիպը անտառային մուգ դարչնագույն, չափավոր խոնավ հողերն են, որոնք ունեն միջինը 25 սմ շերտի հաստությամբ հզորություն:

Գործունեության ենթակա տարածքում մակերեսային ջրային ռեսուրսներ չկան: Տարածքին հարակից ձորակներում՝ 50-100մ հեռավորության վրա կան հալոցքային ջրեր: Գործունեության վայրը գտնվում է Պարզ լճից (ավտոճանապարհով) մոտ 5 կմ, Աղստև գետից և Մ4 ավտոմայրուղուց՝ մոտ 1,5կմ(ուղիղ գծով) հեռավորությունների վրա:

Տարածքը ծառապատ է՝ բուսածածկով: Համաձայն գործունեության տարածքում կատարված ուսումնասիրության՝ բուսականության տիպը անտառայինն է՝ աճում են սաղարթավոր տերևաթափ տեսակներ: Գործունեության ենթակա 1-ին հողակտորում առկա են արևելյան հաճարենի (*Fagus orientalis*)-6 հատ, վրացական կաղնի (*Quercus iberica*)-8 հատ, կովկասյան բոխի (*Carpinus caucasica*)-11 հատ, թխկի վրացական (*Acer ibericum*)-5 հատ, կովկասյան տանձենի (*Pyrus caucasica*)-5 հատ, կեռասենի անտառային (*Cerasus avium*)-4 հատ, հացենի (*Fraxinus excelsior*)- 6 հատ:

Իսկ 2-րդ հողակտորում՝ արևելյան հաճարենի (*Fagus orientalis*)-10 հատ, վրացական կաղնի (*Quercus iberica*)-7 հատ, կովկասյան բոխի (*Carpinus caucasica*)-5 հատ, թխկի վրացական (*Acer ibericum*)-5 հատ, կովկասյան տանձենի (*Pyrus caucasica*)- 8 հատ, կեռասենի անտառային (*Cerasus avium*)-2 հատ, հացենի (*Fraxinus excelsior*)-2 հատ: Հիմնականում հաստաբուն տեսակներն են՝ վրացական կաղնին (*Quercus iberica*) և թխկի սրատերևը (*Acer platanoides*), իսկ մնացած տեսակներն ավելի երիտասարդ են՝ 20-30 սմ տրամագծերով:

Ենթանտառը հիմնականում բացակայում է, անտառային տիպը՝ թույլ արտահայտված տարախոտային է:

Գործունեության ենթակա տարածքում կենդանական աշխարհի բնադրավայրեր և միգրացիոն ուղիներ, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ չեն հայտնաբերվել:

Գործունեության ենթակա տարածքներում պատմամշակութային և բնական հուշարձաններ չկան: Ամենամոտ պատմամշակութային հուշարձանը Հաղարծին վանական համալիրն՝ մոտ 5կմ հեռավորության վրա: Ելնելով ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N438 որոշման 43-րդ կետի պահանջներից, շինարարական աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, ընկերությունը դադարեցնելու է շինարարական աշխատանքերը, վերջինիս մասին հայտնելով լիազոր մարմնին:

Գործունեության տարածքին հարակից՝ մոտ 15մ հեռավորության վրա գտնվում է բնակելի տուն(վարձակալության հիմունքներով): 1-ին տարածքում առկա է փայտաշեն տնակ, որն օգտագործվելու է շինարարության փուլում աշխատողների հանգստի և կենցաղային կարիքները հոգալու համար:

Նախատեսվող գործունեության ճարտարապետահատակագծային լուծումներն այնպես են տրված, որպեսզի ծառեր չհատվեն:

8. Նախատեսվող գործունեության տարածաշրջանի և «Դիլիջան» ազգային պարկի շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը.

8.1 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆ. Դիլիջան առողջարանային քաղաքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելյան, մարզի հարավ-արևմտյան մասում՝ Աղստև գետի հովտում, Հալաբի և Փանբակի լեռնաշղթաների միջլեռնային հատվածում՝ ծովի մակարդակից 1100-1510մ բարձրությունների վրա: Տարածքի միջին բացարձակ բարձրությունը 1256 մետր է: Ռելիեֆը բարդ է: Զաղաքը շրջապատված է Փոքր Կովկասի լեռնազանգվածներով: Հյուսիս-արևելյան մասերում նրան հարում են Բազումի, արևմտյան և հարավ-արևմտյան կողմերից՝ Փամբակի, արևելքից՝ Մուրղուզի և հարավ-արևելքից՝ Արեգունի անտառաշատ լեռները: Լեռնային զանգվածները ծածկված են հարուստ անտառներով, որոնք վերջանալով լեռնային կատարներին, փոխարինվում են ալպյան մարգագետիններով:

Դիլիջանի տեղում հայտնաբերվել են հին բնակատեղիի հետքեր: Չնույն քաղաքը մտել է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Վարաժնունիք գավառի մեջ: 19-րդ դարում 40-ական թթ. այն մտնում է Ելիզավետապոլի նահանգի Ղազախի գավառի մեջ: Այն տարբեր ժամանակներում եղել է գյուղ, գյուղաքաղաք, ավան, որը բաժանված է եղել 2 թաղի՝ Յին թաղ՝ զուտ հայաբնակ և Նոր թաղ՝ ռուսաբնակ: Այժմ քաղաքի բնակչությունը առավելապես միատարր է (ճնշող մեծամասնությունը հայերն են): Դիլիջանը բարեկարգ ավտոմայրուղիներով կապված է մայրաքաղաք Երևանին (96 կմ), Վանաձորին և Տավուշի մարզկենտրոն Իջևանին (35-40կմ): Բնակչության հիմնական մասը զբաղված է բուսաբուծության, անասնապահության, արդյունաբերության, տրանսպորտի, առևտրի և սպասարկման ոլորտներում:

Քաղաքի տնտեսության մասնագիտացված ուղղությունը հիմնականում սպասարկման ոլորտն է: Դիլիջանը, հանդիսանալով առողջարանային քաղաք, ունի մի շարք առողջարան-հանգստավայրեր: Դրանցից ամենախոշորը «Լեռնային Հայաստան» առողջարանն է, որը կառուցվել է 1970-ական թվականներին: Դիլիջանում է գտնվում կոմպոզիտորների միության, կինեմատոգրաֆիստների ստեղծագործական տները: Համայնքում գործում են նաև սննդի արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք զբաղվում են կաթնամթերքի, հանքային ջրերի արտադրությամբ: Դիլիջանի տարածքում կան 2 տասնյակ հանքային աղբյուրներ, որոնք ունեն երկաթ-հիդրոկարբոնատա-քլորիդ-նատրիումակալցիումական բաղադրություն: Առկա են նաև կահույքի, փայտամշակման, սննդի և թեթև արդյունաբերության, սարքավորումների, գորգագործական արտադրություններ: Դիլիջանում 1949թ.-ին կառուցվել է Դիլիջանի հիդրոէլեկտրակայանը:

Դիլիջանի բնական լանդշաֆտներն անտառներն են, որը կազմում է 34.000 հա տարածք: Քաղաքն ունի Էկոտուրիզմի զարգացման մեծ հնարավորություններ և արդեն որոշակի քայլեր են կատարվում դրանց իրականացման ուղղությամբ:

Դիլիջան համայնքը խոշորացվել է (ք.Դիլիջան, Աղավնավանք, Գոշ, Թեղուտ, Հաղարծին, Հովք, Խաչարձան) և զբաղեցնում է 625,25 հա տարածք: Մշտական բնակչությունը 2020թ. տվյալներով կազմում է 26755 մարդ: Համայնքը գազիֆիկացված է, ունի խմելու և ոռոգման ջրի խնդիր: Դիլիջան համայնքի հիմնախնդիրներից են մշակութային կոթողների, առողջարանների և հյուրանոցների, ներքաղաքային ճանապարհների, կեղտաջրերի հեռացման, լուսավորության լուծումները, որոնք շատ կարևոր նշանակություն ունեն տարածաշրջանի զբոսաշրջության զարգացման համար:

8. 2 Սեյսմիկա և երկրաբանություն. Երկրաբանական կառուցվածքը բարդ ու բազմազան է: Այստեղ հանդիպում են գրեթե բոլոր երկրաբանական ժամանակաշրջանների ապարներ: Սակայն առավել տարածված են յուրայի, վերին կավճի, Էոցենի, օլիգոցեն-միոցենի ու չորրորդական հասակի ապարների գոյացումները: Տարածքում կան մետաղական և ոչ մետաղական բազմաթիվ և բազմատեսակ հանքավայրեր: Մետաղներից՝ ծարիրի, պղնձի, գունավոր ու թանկարժեք այլ տարրերի, երկաթի ու մանգանի հանքավայրեր, իսկ ոչ մետաղային հանածոներից՝ կրաքար, ավազ, դոլոմիտ, խիճ, գլաքար, կավ, պորֆիրիտ, ավազաքար և այլ շինանյութերի հանքավայրեր:

Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանները, ներառյալ Աղստև գետի ավազանը, աչքի են ընկնում սողանքների հաճախականությամբ և ինտենսիվությամբ, որոնք ազդում են ռելիեֆի ձևավորման վրա: Փամբակի լեռնաշղթայի հատվածներում՝ Դիլիջանում խոշոր սողանքները շատ տարածված են: Սողանքները տարածված են նաև Հաղարծինի, Պարզ լճի, Ֆիոլետովոյի շրկայքում: Դիլիջան քաղաքը գտնվում է 0.2–0.3 g սեյսմիկ միկրոշրջանցման գոտում:

Հայաստանի հյուսիս-արևելքում և Աղստև գետի ավազանում (հարավային մասերում) տարածված են նաև սելավները, որոնք բնորոշվում են զառիթափերի ոչ բավարար խոնավացմամբ, ջերմաստիճանի և խոնավացման գործոնների կտրուկ տատանումներով, համեմատաբար թույլ վեգետատիվ ծածկի առկայությամբ, նստվածքային կյուլթերի ինտենսիվ հողմահարմամբ և կուտակմամբ:

Կլիմայական պայմանների փոփոխությունները, ջրառատ անձրևների ակտիվությունը, բավարար խոնավությունը, գրունտային ջրերը, խիստ թեքությունները, նախալեռների լվացումը, ուժեղ նստվածքները, անտառային ծածկի կրճատումը, Էրոզիոն գործընթացները, ինչպես նաև բնական լանդշաֆտների խախտումը և մարդածին գործողությունները նպաստում են սողանքների և սելավների էլ ավելի ակտիվացմանը:

8.3 Կլիման և օդային ավազանի իրավիճակը: Դիլիջան քաղաքի կլիման բարեխառն լեռնային է՝ ցուրտ ձյունառատ ձմեռներով և տաք, համեմատաբար խոնավ ամառներով: Հաճախակի են լինում մառախուղները: Հունվարյան միջին ջերմաստիճանը -2°C է, հուլիսինը՝ $18-20^{\circ}\text{C}$: Տարեկան թափվում են 600-650մմ մթնոլորտային տեղումներ: Օդի հարաբերական խոնավությունը կազմում է 70%: Օդի չորությունը առանձնապես արտահայտվում է ձմռան և գարնան ամիսներին: Արևափայլի տևողությունը 2091 ժամ է: Գերակայում են արևելյան (17%) և հյուսիս-արևելյան(46%) քամիները՝ 2 մ/վրկ միջին տարեկան արագությամբ: Բնակլիմայական պայմաններով Դիլիջանը եզակի բնակավայրերից է, որտեղ բնությունն ու բնապատկերը լրացուցիչ դրական ներգործություն են ունենում հիվանդների և հանգստացողների և տուրիստների վրա:

Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներն են հանդիսանում կոմունալ-կենցաղային օբյեկտների, ջեռուցման գազային անհատական սարքերը և ավտոտրանսպորտը: Դիլիջանի օդի աղտոտվածությունը չի գերազանցում նորմատիվային մակարդակը:

Կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀԾՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ Դիլիջանի օդերևութաբանական կայանի դիտարկումները և համապատասխան կլիմայական ցուցանիշները:

Օդի ջերմաստիճանը, $^{\circ}\text{C}$

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների $^{\circ}\text{C}$												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն	
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				

Դիլիջան	1256	-1.5	-1.0	2.2	7.7	12.0	15.2	18.3	18.1	14.3	9.3	4.3	0.4	8.3	-23.1	38
---------	------	------	------	-----	-----	------	------	------	------	------	-----	-----	-----	-----	-------	----

Օդի խոնավությունը (%)

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը. %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենա- ցուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Դիլիջան	63	65	70	72	78	79	77	78	79	78	73	70	74	51	60

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը												Ձյան ծածկույթը			
	ըստ ամիսների											տարե- կան	տասնօրյա առավելա- գույնը, սմ	օրերի թիվը	ջրի առա- վելագույն քանակը ձյան մեջ, մմ	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI					XII
Դիլիջան	22 35	30 33	45 42	65 43	106 58	103 62	66 55	51 47	46 45	47 45	36 49	22 33	639 62	53	57	103

Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 22մ/վ է, 50 տարվա ընթացքում 24մ/վ: Ձյան նորմատիվային ճնշումը՝ 50կգոմ/մ² է: Քամու արագության նորմատիվային ճնշումը՝ 27կգ/մ² է:

8.4 Հողային ռեսուրսներ: Համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը 4301.5 հա է, անտառային հողերը (ազգային պարկ)՝ 1786.4հա: Անտառային գոտում գերակշռում են անտառային շակասագույն հողերը, որոնք աչքի են ընկնում բարձր հզորությամբ և հորիզոնների լավ դիֆերենցվածությամբ: Ողջ անտառային գոտում հանդիպում են կարբոնատներով հարուստ, ապարների վրա զարգացած՝ տափաստանացված շակասակագույն հողերը, մոզայիկ կառուցվածքով: Ենթալայան գոտում զարգացած են լեռնամարգագետնային սևահողերը: Այնտեղ որտեղ տարածքը երոզացված չէ, հողերը աչքի են ընկնում հզոր հումուսային շերտով՝ մինչև 40 սմ:

8.5 Ջրային ռեսուրսներ: Դիլիջանի միջով հոսում է Աղստև գետը՝ Դիլիջան և Բլրան վտակներով: Աղստև գետը հոսում է հյուսիս-արևելյան ուղղությամբ և թափվում է Քուռը: Համայնքի սահմաններում Աղստև գետն ունի համեմատաբար լայն ողողահուն՝ 50-60 մ: Գետի երկարությունը 133 կմ է, ջրահավաք ավազանը Հայաստանի սահմաններում կազմում է շուրջ 1610 կմ², միջին տարեկան հոսքը՝ 6,83 մ³/վրկ: Գետերը քաղցրահամ տիպիկ լեռնային են, հոսում են ձորակներով: Քաղաքում Բլրան գետի ձորում առկա են հանքային բուժիչ ջրի աղբյուրներ, որոնք իրենց քիմիական բաղադրությամբ նման են «Բորժոմի» և ֆրանսիական «Վիշիի» հանքային աղբյուրներին: Քաղաքի հյուսիսային մասում է գտնվում շուրջ 8մ խորություն ունեցող Պարզ լիճը: Պարզ լիճից դեպի արևելք, Գոշ գյուղից 3 կմ հեռավորության, 1500 մ բարձրության վրա է գտնվում Գոշի (Տզվկա) լիճը: Պարզ լիճն հարող անտառապատ տարածքներում գործում են մի քանի հանգստյան տներ:

8.6 Կենսաբազմազանություն. Նախատեսվող գործունեության տարածաշրջանն աչքի է ընկնում բարենպաստ կլիմայական պայմաններով և ռեկրեացիոն ռեսուրսներով: Անտառները հիմնականում ունեն բնական ծագում: Տարածաշրջանի անտառային բուսականությունը հիմնականում կազմված է կովկասյան և հյուսիսային ֆլորիստիկ տարրերից: Ավելի ցածր լեռնային գոտում (մինչև 1000մ) գերակշռում են արևելյան բոխու անտառները (*Carpinus orientalis*), առկա են նաև Վրացական կաղնին (*Quercus iberica*), սովորական և հացենի սրապտուղը (*Fraxinus excelsior*, *F. oxycarpa*), ավելի հազվադեպ՝ Սովորական բոխին (*Carpinus betulus*), Վրացական և Դաշտային թխկին (*Acer ibericum*, *Acer campestre*), Թեղի տերևաշատը (*Ulmus foliacea*), Գիհին (*Juniperetum*), Կովկասյան փռշին (*Celtis caucasica*), Լշենին (*Amigdalus fenzliana*), կովկասյան տանձենին (*Pirus caucasica*) և այլն: 700-1400մ բարձրության վրա աճում է Ընկուզենի սովորականը (*Juglans regia*, իսկ 900-2000մ բարձրության վրա տարածվում են հիմնականում կաղնու և հաճարենու անտառները: Հաճարենու (*Fagetum*) անտառների հետ համատեղ հանդիպում են Սրտածև լորենին (*Tilia cordata*), Սրատերև թխկին (*Acer platanoides*), Բարդի դողդոջունը (*Populus tremula*), Կովկասյան տանձենին (*Pyrus caucasica*), Կեռասենի անտառայինը (*Cerasus avium*), Սովորական արոսին (*Sorbus aucuparia*) և այլն: Վայրի մրգերի ծառատեսակները բավականին տարածված են և ներկայացնում են խնձորենին (*Malus*), տանձենին (*Pyrus*), սզին (*Crataegus*), ընկուզենի հունականը (*Juglans regia*), սալորենի չովածը (*Prunus divaricata*) և այլն:

Խոտածածկ հատվածներում հանդիպում են շյուղախոտը (*Festuca mintana*), գետնաստղ բուսավետը (*Asperula odorata*), սինդրիկ օղակավորը (*Polygonatum vericillatum*), դաշտակոտեն պատկառուկը (*Cardamine impatiens*), շահոքրամ սովորականը (*Geum urbanum*), եղեսպակ կաչունը (*Salvia glutinosa*), զանգակ կաթնածաղկայինը (*Campanula lactiflora*) և այլ տեսակներ:

Լեռնամարգագետնային բուսականությունը տարածված է 1700-2550մ բարձրության վրա: Մարգագետինների մեծ մասն օգտագործվում են որպես արոտավայրեր, որոնցում հանդիպում են սիզախոտ մարգագետնայինը (*Phleum pratense*), ոզնախոտ կծկավորը (*Dactylis glotemera*), դաշտավլուկ կաղնուտայինը (*Poa nemoralis*), երեքնուկ մարգագետնայինը (*Trifolium pratense*), ագրիսոտուկ սպիտակը (*Agrostis alba*) և այլն:

Ենթալայան մարգագետնում գերակշռում են հացազգի, ընդավոր բույսերի և խոտաբույսերի ներկայացուցիչները՝ ցորնուկը (*Bromus variegatus*), արևելյան կակաչը (*Papaver orientalis*), խարբուկ խոշորածաղիկը (*Lapsana grandiflora*), տերեփուկը (*Centaurea fischeri*) և այլ տեսակներ: Բնական ալպիական բուսականությունը բացակայում է, մասնակիորեն հանդիպում են՝ կազմորի (*Nardus stricta*), ոչխարի շյուղախոտ (*Festuca ovina*), գնարբուկ (*Primula algida*), կովկասյան քիմին (*Carum caucasicum*), դաշտավլուկ ալպիական (*Poa alpina*), ցորնուկ (*Bromus variegatus*) և այլ տեսակներ:

8.7 Պատմամշակութային հուշարձաններ. Զաղաքի շրջակայքում են գտնվում տուրիստական նշանակություն ունեցող Ջուխտակ վանքը, Հաղարծինը, Գոշավանքը, Մաթոսավանքը և այլն:



Նկար 2.

Հաղարծինը (Haghartsin Monastery) 10-13-րդ դարերի միջնադարյան հանրահայտ վանքային համալիր է: Վանքը գտնվում է Դիլիջանից դեպի արևելք՝ 12 կմ հեռավորության վրա: Այն բաղկացած է 4 եկեղեցիներից, երկու մատուռներից, սեղանատնից, ժամատներից և խաչքարերից:

Գոշավանքը (Goshavank) գտնվում է Գոշ գյուղի կենտրոնական մասում Դիլիջանից դեպի արևելք 16 կմ հեռավորության վրա: Վանքն ընկած է Տանձուտ գետի գեղատեսիլ կանաչապատ կիրճում, ծովի մակերեսույթից 1230 մետր բարձրության վրա: Այն բաղկացած է 12-13-րդ դարերում կառուցված մի քանի եկեղեցական կառույցներից և սրբատեղիներից, որոնք ձևավորել են հոյակապ ճարտարապետական համալիր: Վանքն ունեցել է գրապահոց (1241-1291թթ.): Եկեղեցու մուտքի մոտ դրված է 1291թ. վարպետ Պողոսի կողմից պատրաստված հայտնի Ասեղնագործ խաչքարը:

Մաթոսավանքը (Matosavank) գտնվում է Ջուխտակ վանքի դիմաց, Դիլիջանից 3.5 կմ դեպի արևմուտք՝ Բլրան գետի աջ ափին: Վանական համալիրը բաղկացած է 3 ոչ մեծ շենքերից: Եկեղեցուց հարավ-արևելք կա միջնադարյան հայկական գերեզմանոց: Սուրբ Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1205թ.:

Ջուխտակ վանքը (Jukhtak Vank) գտնվում է Դիլիջանից արևմուտք՝ 3 կմ հեռավորության վրա, Աղստեղ գետի 2 ոչ մեծ վտակների միջև, «Դիլիջան» հանքային ջրերի աղուներուց ոչ հեռու: Կառուցվել է 12-13-րդ դարերում, կազմված է երկու եկեղեցիներից, որից էլ ստացել է անվանումը: Եկեղեցու մոտ պահպանված է միջնադարյան ոչ մեծ գերեզմանոց:

Չբոսաշրջություն. Ազգային պարկի և հարակից համայնքների առանձնահատուկ արժեքները՝ հարուստ կենսաբազմազանությունը, բնական անտառները և ջրատարածքները (լճեր, լեռնային գետեր, ջրվեժներ), լանդշաֆտային բազմազանությունը, հանքային ջրի աղբյուրները, տեսարժան վայրերը (պատմամշակութային արժեքները), տաք և խոնավ կլիման՝ առանձնահատուկ միկրոկլիմայով, բերրի հողերը նպաստավոր պայմաններ են ստեղծում տարածքի զբոսաշրջության և տնտեսության զարգացման համար:

Քաղաքն ունի Էկոտուրիզմի հեռանկարային զարգացման մեծ հնարավորություններ:

8. 8 «Դիլիջան» ազգային պարկ. Դիլիջան ԱՊ-ի տարածքը Հայաստանի բնաշխարհի եզակի անկյուններից է, որն առանձնանում է հարուստ և յուրօրինակ կենսաբազմազանությամբ, անտառային լանդշաֆտով, գիտական, ճանաչողական, տնտեսական առանձին Էկոհամակարգերով ու բնության հուշարձանների բնապահպանական, գիտաճանաչողական, առողջապահական և ռեկրացիոն բարձր արժեքներով:

Դիլիջանի մոտակայքում տարածվող անտառահատվածում ստեղծվել է Հայաստանի արգելանոցներից մեկը՝ «Դիլիջան» ազգային պարկը»: Անտառի բուսական (մեզոֆիլ կաղնու և հաճարենու անտառների, ինչպես նաև ռելիկտային տեսակների՝ կենու և կովկասյան մրտավարդ) և կենդանական աշխարհի պահպանման, հարստացման և տեղական պայմաններում նոր տեսակների ստացման նպատակով 1958 թ. կազմակերպել է պետարգելոց (Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի N341 որոշում): Պետարգելոցի բազայի և հարակից տարածքների հիման վրա, ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 21-ի N165 որոշմամբ ձևավորվել է «Դիլիջան» ազգային պարկը»: Իսկ ՀՀ կառավարության 2002թ.-ի մայիսի 11-ի N 920-Ն որոշմամբ հաստատվել են «Դիլիջան» ազգային պարկի և «Դիլիջան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության(ՊՈԱԿ) կանոնադրությունները: ԱՊ-ի նպատակն է ապահովել լանդշաֆտների և կենսաբազմազանության, պատմամշակութային ժառանգության պահպանումը, ինչպես նաև համահունչ տնտեսական զարգացումը: Ազգային պարկը տարածված է Դիլիջան քաղաքի և 9 գյուղական համայնքների վարչական սահմաններում: Դիլիջան քաղաքը և հինգ գյուղական բնակավայրեր (Թեղուտ, Հաղարծին, Գոշ, Խաչարձան և Աղավնավանք) գործնականում գտնվում են ԴԱՊ-ի սահմաններում: «Դիլիջան» ազգային պարկը գտնվում է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) հյուսիս-արևելքում, զղբաղեցնում է ՀՀ Տավուշի մարզի փոքր հատվածները, նաև՝ Լոռու և Գեղարքունիքի մարզերը: Այն տարածվում է մի քանի լեռնաշղթաների լանջերին՝ 1070մ - 2900մ բարձրությունների վրա:

Համաձայն «Դիլիջան» Ազգային պարկի կանոնադրության՝ ԴԱՊ-ը բաժանվում է տարբեր տարածագործառնական նշանակության գոտիների, սահմանվում է պահպանության ռեժիմը, տարբեր տարածքների թույլատրելի օգտագործումը, ռեսուրսների օգտագործման և պահպանության մակարդակները:

Այժմ Ազգային պարկի տարածքը նախկին արգելոցի 28000 հա-ից ավելացել է, հասնելով 33765 հա-ի: Պարկի տարածքը՝ համաձայն պարկի հողերի գոտևորման և օգտագործման սխեմաների («ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ 2016-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ) բաժանվում է.

- ա) արգելոցային- զբաղեցնում է 8,164.2 հա տարածք կամ ԴԱՊ 24.2%,
- բ) հանգստի (ռեկրեացիոն)-զբաղեցնում է 2,817.7 հա տարածք կամ ԴԱՊ 8.3% ,
- գ) տնտեսական - զբաղեցնում է 22,783.1 հա տարածք կամ ԴԱՊ 67.5%:


Այն ունի նաև 8167 հա բուժերային գոտի:

Գոտիները սահմանվում են կենսաբազմազանության, լանդշաֆտային և էկոհամակարգերի առանձնահատկությունների, պահպանվող տարածքի տեսլականի և նպատակների, ինչպես նաև դրա սոցիալ-տնտեսական միջավայրի և այլ արտաքին գործոնների հիման վրա:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի «ԴԻԼԻԶԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ 2017-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԱՌԱՋՆԱԶԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 190-Ն որոշման՝ նախատեսվում է մինչև 2026թ. «Դիլիջան» ազգային պարկի գոտիների փոփոխություններ. արգելոցային՝ 13593,1հա (40,3%), արգելավայրայինը՝ 8048,3հա(24,9%), ռեկրացիոն՝ 1,724,4հա(5,1%), տնտեսական՝ 10,039,5հա(29,7%): Բուժերային գոտին(պահպանվող), որը չի հաշվառվում ԱՊ-ի տարածքում, կազմելու է 18,920հա:

Անտառը կազմում է ազգային պարկի տարածքի 94%-ը: ԱՊ-ի անտառում աճում են շուրջ 40 տեսակի արժեքավոր ծառատեսակներ և 18 տեսակի թփեր: Հիմնական անտառ կազմող ծառատեսակներն են կաղնիս, հաճարենիս, բոխիս: Սաղարթավոր տերևաթափ ծառատեսակներից տարածված են նաև թխկու, կեչու, հացենու, ուռենու, լորենու, թեղու և այլ տեսակներ:

«Դիլիջան» ազգային պարկ



Նկար 3.

Ազգային պարկը հայտնի է իր անտառային լանդշաֆտով, բուժիչ հանքային ջրերի աղբյուրներով, ինչպես նաև բնական և պատմաճարտարապետական հուշարձաններով: ԲՀՀ-ի ու Կենսաբազմազանության միջազգային պահպանության (Conservation International) կազմակերպության կողմից այն կենսաբազմազանության առումով ճանաչվել է աշխարհի կարևորագույն վայրերից մեկը: ԱՊ Դիլիջան Ազգային Պարկի տարածքում խստիվ արգելվում է ձկնորսական, որսորդական և դեղագործական նպատակներով կենդանիների որսը:

Երկրաբանություն և ռելիեֆ. Ազգային պարկը գտնվում է Փոքր Կովկասի լեռնաշղթայի կենտրոնական հատվածում: Պարկի արևելյան հատվածը ընդգրկում է անհամաչափ կառուցվածք ունեցող Միափորի լեռնաշղթայի 54կմ երկարությամբ հարավային լանջերը, որի արևմտյան հատվածը բնութագրվում է ժայռոտ մերկացումներով: Հյուսիս-արևելք ձգվող Իջևանի լեռնաշղթան աչքի է ընկնում գառիթափ լանջերով և մինչև 200մ բարձրությամբ կրաքարային, ժայռային կտրվածքներով: Այստեղ լայն տարածում ունեն ռելիեֆի կարստային ձևերը (քարանձավներ, վիհեր, խառնարաններ և այլն): Հալաբի (Բովաքարի, ամենաբարձր կետը՝ 3016մ) լեռնաշղթան տարածվում է Իջևանի լեռնաշղթայի արևմուտքից դեպի Գուգարաց լեռնաշղթայի հարավային ջրբաժան գոտի: Հարավ-արևմտյան հատվածում պարկը շրջապատված է Փամբակի լեռնաշղթայի լեռնաբազուկներով՝ Էոցենային դարաշրջանի, հրաբխա-նստվածքային ապարներով: Կենտրոնական մասում գտնվում է համեմատաբար բարձր՝ Թեժ լեռը՝ (3101մ):

Ազգային պարկի տարածքի 43%-ից ավելին գտնվում է 1600-2000մ, 33,9%-ը՝ 1200-1600մ, իսկ 16%-ը՝ 2000-2400մ բարձրությունների վրա: Վերջիններս հիմնականում ներառում են բարձրադիր անտառները և ենթալպյան մարգագետինները: Այս տարածքը կարևոր ապրելավայր է Էնդեմիկ տեսակների՝ Կովկասյան ազնվացեղ եղջերուի և Կովկասյան մարեհավի համար:

Կլիման. ԴԱՊ-ի տարածքի կլիմայական պայմանները պայմանավորված են ուղղահայաց գոտիավորմամբ և հիմնականում բնութագրվում են չափավոր տաք և խոնավ կլիմայով՝ երկար ամառ, իսկ բարձր լեռնային գոտում՝ երկար ձմեռ: Ստորին լեռնային գոտում տարեկան տեղումների միջին մակարդակը 500մմ է, իսկ բարձր լեռնային գոտում այն հասնում է 850մմ-ի: Առավելագույն տեղումները լինում են գարնանը, (տարեկան միջին տեղումների 35%-ը), իսկ նվազագույն տեղումները՝ ձմռանը (12%): Բարձր լեռնային գոտում, որտեղ ձյունածածկ շրջանը տևում է մոտ 270 օր, ձյան խորությունը գերազանցում է 70 սմ-ը: Ստորին լեռնային գոտում ոչ բոլոր տարիներին է առաջանում ձնածածկույթ: Ստորին լեռնային գոտում միջին ջերմաստիճանը հունվարին 0-2.5⁰с, իսկ հուլիսին այն հասնում է մինչև 21⁰с: Միջին լեռնային գոտում միջին ջերմաստիճանը հունվարին 10-13⁰с, իսկ օգոստոսին՝ մինչև 15⁰с: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 35⁰с, իսկ բացարձակ նվազագույնը՝ -26⁰с: Անսառնամանիք շրջանը տևում է 200-210 օր:

Հիդրոլոգիան. ԴԱՊ-ի գետերը պատկանում են Զուր գետի ավազանին՝ տիպիկ լեռնային են, սնվում են ձնհալից և անձրևաջրերից, ինչպես նաև բազմաթիվ ստորերկրյա աղբյուրներից: Գետերի մեծ մասը սակավաջուր են, հեղեղները հիմնականում տեղի են ունենում գարնանը՝ առաջացնելով սելավներ, սահանքներ: Աղստևը պարկի տարածքով անցնող հիմնական գետն է, որը սկիզբ է առնում Փամբակի հյուսիսային լանջերից (Թեժ լեռ, 3101մ): Գետի երկարությունը

121 կմ է, ավազանի մակերեսը՝ 2500 կմ², իսկ տարեկան հոսքը՝ 256 մլն մ³: Այն սնվում է ձնհալներից ու անձրևներից, առավելագույն հոսքը նկատվում է մայիսից մինչև հունիս: Աղստևի հիմնական վտակը Գետիկն է, իսկ Զովվաջուր, Շտողանաջուր, Զաղարծին և Բլղան գետակները փոքր վտակներ են: Գետիկ գետը (58կմ երկարությամբ և 586 կմ² ավազանով) սկիզբ է առնում Սևանի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից՝ 2620մ բարձրությունից, հոսելով Արեգունու և Միափորի միջլեռնային հովտով թափվում է Աղստև գետը:

ԴԱՊ-ը հայտնի է իր հանքային աղբյուրներով: Զատկանշական են Թթու ջուրը (Գետիկ գետի հովտում), Մարգահովիտը (հարուստ է երկաթով), Ֆիոլետովոն (հարուստ է ածխածնով և կալցիումով) և Բլղանի աղբյուրները («Դիլիջան» հանքային ջուր): Զիդրո-կարբոնատներով հարուստ այս ջրերը օգտագործվում են աղեստամոքսային հիվանդությունների բուժման համար:

Պարկի ամենամեծ ու ամենահայտնի լիճը Պարզ լիճն է, որը գտնվում է Արեգունի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին՝ 1400մ բարձրության, Դիլիջան քաղաքից 8 կմ (հյուսիս-արևելք) հեռավորության վրա: Պարզ լիճը զբաղեցնում է 2հա մակերես, երկարությունը 250մ է, լայնությունը՝ 70մ, միջին խորությունը՝ 6-8մ, ջրի ծավալը՝ 83,8 հազ. մ³, իսկ ջրհավաք ավազանը՝ 1,52 կմ²:



Նկար 4.

Հաջորդը՝ Գոշայիճն Է (Տգրկա), որը գտնվում է Պարզ լճից արևելք՝ ծովի մակերևույթից 1500մ բարձրության վրա: Այն ունի 56մ երկարություն և 270մ լայնություն, մակերեսը 1,53հա է, ջրբաժան հատվածի մակերեսը՝ 1,34 կմ² է, իսկ միջին խորությունը՝ 6մ: Պարկում կան նաև մի քանի փոքրիկ լճակեր:

Հողեր. ԴԱՊ-ի հողային ծածկույթն ունի հիմնականում երկու հողատիպեր՝ անտառային և լեռնամարգագետնային: Անտառային գոտում գերակշռում են շագանակագույն և դարչնագույն անտառային հողերը, որոնք ունեն բարձր խոնավություն: Դարչնագույն անտառային հողերը գտնվում են մինչև 1500մ բարձրության վրա՝ կաղնու և բոխու անտառածածկի գերակշռությամբ: Հողը ձևավորող հիմնական քարերն են կրաքարը, դոլոմիտները և պորֆիրները: Այս հողերին բնորոշ է բարձր կլանողականությունը, հարուստ հումուսային՝ հատիկավոր կառուցվածքը, չեզոք կամ շատ թեթև արտահայտված հիմնային ռեակցիան: Հողի այս տեսակը բաժանվում է երեք ենթատեսակների՝ լվացվող (առանց կրաքարի), տիպիկ (մասնակի լվացվող) և կարբոնատային, որն իր հերթին բաժանվում է մարգագետնային, կրային, կավային և այլ հողատիպերի:

Շագանակագույն անտառահողերը հանդիպում են հյուսիսային լանջերին՝ մինչև 1800մ բարձրության վրա՝ հիմնականում բոխու և հաճարենու անտառածածկույթներով: Հողային կառուցվածքին բնորոշ է շագանակագույն գունավորումը և թույլ գոտիավորումը: Սկսած 1700-1800մ բարձրություններից, շագանակագույն հողերը փոխարինվում են սև հողերի, իսկ ավելի 2400մ բարձր տեղանքներում՝ լեռնամարգագետնային սևահողերի: Լեռնամարգագետնային հողատեսքերը հանդիպում են հարուստ խոտածածկով նոսր անտառներում: Այս հողերը, ընդհանուր առմամբ, հարուստ են ազոտով, ֆոսֆորով և ազատ երկաթով: ԴԱՊ-ի տարածքի լայնարձակ հովիտներում տարածված են բերրիության բարձր մակարդակ ունեցող ալլուվիալ հողերը:

Հայաստանի հյուսիս-արևելյան շրջաններում տարածված են սողանքները, որոնց հաճախականությունը և ինտենսիվությունը հատկապես բարձր է Դիլիջան քաղաքում և Աղստև գետի ավազանում:

Կլիմայական պայմանների փոփոխությունները, անտառային ծածկի կրճատումը, ինչպես նաև ջրառատ անձրևների ակտիվությունը, բնական լանդշաֆտների խախտումը, Էրոզիոն գործընթացները և մարդածին գործողությունները նպաստում են ԱՊ-ի տարածքում սելավների և սողանքների ակտիվացմանը:

ԴԱՊ-ի տարածքին բնորոշ են թույլ հողմահարումները, Էրոզիոն գործընթացները և փարթամ վեգետատիվ ծածկը:

Կենսաբազմազանություն.

Բույսեր. «Դիլիջան» ազգային պարկի բուսականության հիմնական տիպը անտառն է: Այստեղ հիմնականում գերակշռում են լայնատերև տերևաթափ ծառատեսակները՝ հաճարենի արևելյան (*Fagus orientalis*), կաղնի վրացական (*Quercus iberica*), կաղնի արևելյան (*Q. macranthera*), բոխի սովորական (*Carpinus betulus*), բոխի արևելյան կամ դաժի (*C. orientalis*): Հաճարենու, կաղնու և կաղնու-բոխու անտառները զբաղեցնում են ծովի մակարդակից 1000-2000մ բարձրության լեռնալանջերը: Գիժու անտառները հանդիպում են 1800-2000մ բարձրությունների վրա: Ենթալայան մարգագետինները տարածված են 1800-1900 մ-ից բարձր:

Պարկի ենթալայան գոտում հաճախ հանդիպում են կեչու անտառներ, որոնցում գերակշռում են կեչի ելունդավոր (*Betula pendula*), կեչի Լիտվինովի (*B. litvinovii*), բարդի դողդոջուն (*Populus tremula*), այծուռենի (*Salix caprea*), ինչպես նաև շուշան հայկական (*Lilium armenum*), ընձախոտ արևելյան (*Aconitum orientale*), զիվան հսկայական (*Cephalaria gigantea*), քոսքոսկ կովկասյան (*Scabiosa caucasica*), ոզնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), զանգակ խմբված (*Campanula glomerata*), թթվիճ խոշորածաղիկ (*Betonica macrantha*), դրոնիկում երկարատերև (*Doronicum oblongifolium*) տեսակները: Ասեղնատերև ծառատեսակներից կազմված անտառները պարկում սամանափակ են: Պարկի տարածքում աճում են նաև երկարակյաց կենու՝ 300-400 տարեկան, մինչև 25 մետր բարձրություն և բնի՝ 80-100 սմ տրամագիծ ունեցող ծառեր: Երրորդական ժամանակշրջանից պահպանված այս ծառատեսակների պուրակներից մեկը գտնվում է Գետիկի ավազանում և ամենախոշորն է Անդրկովկասում:

Պարկի անտառները շատ հարուստ են նաև վայրի պտղատու-հատապտղատուների՝ տանձենի կովկասյան (*Pyrus caucasica*), խնձորենի արևելյան (*Malus orientalis*), սալորենի չռված (*Prunus divaricata*), սալորենի փշոտ կամ մամխենի (*P. spinosa*), հոնի սովորական (*Cornus mas*), զկեռ սովորական (*Mespilus germanica*), կոկոռչենի թեքված (*Grossularia reclinata*), ինչպես նաև սզի (*Crataegus*), հաղարջենի (*Ribes*), մոշենի (*Rubus*), ընկուզենի սովորական (*Juglans regia*) և տիլեի սովորական (*Corylus avellana*) տեսակներով:

Անտառազուրկ փոքր հատվածներում ներկայացված են տափաստանային համակեցուցությունները՝ շյուղախոտ վալեսյան (*Festuca valesiaca*) և փետրախոտ գեղեցիկ (*Stipa pulcherrima*) տեսակների առկայությամբ, որոնք բնորոշ չեն տարածքին:

Տարախոտահացազգիներից հանդիպում են՝ բարակոտնուկ սանրանման (*Koeleria cristata*), դաշտավլուկ մարգագետնային (*Poa pratensis*), դաշտավլուկ անտառային (*P. nemoralis*), ոզնախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), խմբախոտ բուրավետ (*Anthoxanthum odoratum*), ոսկեվարսակ սիբիրյան (*Trisetum sibiricum*), գևարբուկ խոշորաբաժակ (*Primula macrocalyx*), տերեփուկ դեղնամանուշակագույն (*Centaurea cheiranthifolia*) և այլ տեսակները: Արեղասարի ժայռոտ և քարքարոտ արևմտյան լանջերն ապրելավայր են բազմաթիվ քարասեր տեսակների համար, որոնցից Յայաստանի կարմիր գրքում ընդգրկված սրոհունդ հայկական (*Hypericum armenum*) և քարբեկ եռմատնանի (*Saxifraga tridactylites*), ինչպես նաև քարբեկ գիհատերև (*Saxifraga juniperifolia*), խինձ կոշտ (*Scorzonera rigida*), զիվան միջին (*Cephalaria media*), քոսքոսկ աղավալու (*Scabiosa columbaria*) տեսակների համար:

Քարափներին և լեռնային ձորակների քարքարոտ լանջերին հանդիպում է ինտրագոնալ քարասեր բուսականությունը: Գետերի և լճերի ափերին գերակշռում է ջրածահճային բուսականությունը, որոնցում հանդիպում են ուռենի (*Salix*), բարդի (*Populus*), բոշխ (*Carex*), գորտնուկ (*Ranunculus*), կյյուն (*Juncus*) և այլ ցեղերի տարբեր տեսակներ: Գոշի լճի ափային տարածքում գրանցվել է այս տարածքի համար ոչ բնորոշ ձիածեփ (*Equisetum telmateia*) միատարր համակեցությունը: Պարկը բավական հարուստ է գեղազարդային՝ սոխ հաղթության, կուսածաղիկ խոտային, նվիկ արևելյան, բաղեղ կովկասյան, ոզնագլխիկ, գրոսիեյմիա խոշորածաղիկ, զանգակ, հիրիկ եղանի, շուշան հայկական և այլ տեսակներով:

Պարկում հանդիպում են սննդում օգտագործվող 123 բուսատեսակներ: Աճում են շուրջ 180 դեղաբույսեր (անթառամը, դաղձը, ուրցը, մեղրածուծը, լոշտակը, մալտակը և այլն):

Ազգային պարկի տարածքում և շրջակայքում հայտնաբերվել են 480 մակրոսկոպիկ սնկերի տեսակներ և ենթատեսակներ, որոնց մեծ մասը օգտագործվում են մարդու սննդում: Ամենատարածվածներն են դառնամատիտեղը (*Russula*), կաթնասունկը (*Lactarius*), սարդոստայնասունկը (*Cortinarius*), թելիկասունկը (*Inocybe*), ճանճասպանը (*Amanita*), կոճղասունկ իսկականը (*Armillaria mellea*), ականջասունկը (*Pleurotus*), գլխասունկ պարկանման (*Calvatia utriformis*), շամպինիոն սովորական (*Agaricus campestris*), մարգագետնային կոճղասունկ (*Marasmius oreades*), յուղասունկ հատիկավոր (*Suillus granulatus*), շեկլիկ (*Lactarius deliciosus*), աղվեսասունկ (*Cantharellus cibarius*) և այլ տեսակներ: Պարկի տարածքում հայտնաբերվել են նաև 38 տեսակի թունավոր սնկեր՝ խոզուկասունկը (*Paxillus involutus*), կեղծ կոճղասունկը (*Hypholoma fasciculare*), ճանճասպան կարմիրը (*Amanita muscaria*), ճանճասպան հովազայինը (*Amanita pantherina*), ճանճասպան կանաչը (*Amanita phalloides*), սատանայի սունկը (*Boletus satanas*) և այլն: Ազգային պարկի տարածքում հաշվառված որոշ սնկատեսակներ /15/ վտանգված են և ներառված են Հայաստանի բույսերի Կարմիր գրքում- ճանճասպան կարմիրը (*Amanita muscaria*), ճանճասպան կանաչը (*Amanita phalloides*), աստերոֆորա անձրևայինը (*Asterophora lycoperdoides*), բուլետոպսիս սևասպիտակը (*Boletopsis leucomelas*), սպիտակ սունկը (*Boletus edulis*), սատանայի սունկը (*Boletus satanas*), կլավարիադելֆուս վարսանդանմանը (*Clavariadelphus pistillaris*), ցիստոդերմա ամիանտայինը (*Cystoderma amianthina*), հապլոպորուս հոտավետը (*Haploporus odoratus*), ոզնասունկ մարջանաձևը (*Hericium coralloides*), ոզնասունկ կաղնուկ (*Hericium erinaceum*), հովանոցասունկ աղջկականը (*Macrolepiota puellaris*), մուտինուս շնայինը (*Mutinus caninus*), կոնասունկ փաթիլատիկը (*Strobilomyces strobilaceus*), գետնասունկ ամառայինը (*Tuber aestivum*):

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում աճում են 97 ընտանիքի 441 ցեղի շուրջ 1150 տեսակի անոթավոր բույսեր(այդ թվում նաև յոթ էնդեմիկ տեսակներ): Բույսերից 17-ն ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (9-ը՝ վտանգված(EN), 5-ը՝ խոցելի(VU), իսկ 3-ը՝ անհետացման եզրին գտնվող (NT) կարգավիճակով):

- Պսեֆելլուս դեբեդիկ (*Psephellus debedicus*) (EN),
- Պոպուլիկ Մարշալի (*Corydalis marschalliana*) (EN),
- Պապլոր դժգոյն (*Muscari pallens*) (EN),
- Արքայածաղիկ բլրակային (*Fritillaria collina*) (EN),
- Էպիպոգիում անտերև (*Epipogium aphyllum*) (EN),
- Բանալոտ Բրաունի (*Polystichum braunii*) (EN),
- Հողմածաղիկ գորտնուկային (*Anemone ranunculoides*) (EN),
- Թեզիում փռված (*Thesium procumbens*) (EN),
- Օրտիլիա փոքր (*Orthilia secunda*) (EN),
- Եզնակող Կոզո-Պոլյանսկու(*Bupleurum koso-poljanskyi*) (VU),
- Պարբուկ սքանչելի (*Primula amoena*) (VU),
- Շիկատակ (*Atropa bella-donna*) (VU),
- Կենի հատապտղային (*Taxus baccata*) (VU),
- Շյուղախոտ անտառային (*Festuca drymeja*) (VU),
- Ձնծաղիկ Միրզոևայի (*Merendera mirzoevae*) (NT),

- Շուշան հայկական (*Lilium armenum*) (NT),
- Սակողուկ միջին (*Pyrola media*) (NT):

14 տեսակը ենդեմներ են, որոնցից 7-ը՝ Հայաստանի, 3-ը՝ Կովկասի, 4-ը՝ Անդրկովկասի:

Հայաստանի ենդեմիկներ.

- Եզևակոխ Կոզո-Պոլյանսկու (*Bupleurum koso-poljanskyi*)
 - Պսեֆելլուս դեբեդի (*Psephellus debedicus*)
 - Պսեֆելլուս փամբակի (*Psephellus pambakensis*)
 - Ձնծաղիկ Միրզոևայի (*Merendera mirzoevae*)
 - Խլածաղիկ Օլգայի (*Scrophularia olgae*)
 - Կտավախոտ զանգեզուրի (*Linaria zangezura*)
 - Մասրենի Սոսնովսկու (*Rosa sosnovskyana*)
- Կովկասի ենդեմիկներ.

- Ճոճոռուկ կովկասյան (*Cerastium holosteum*)
- Պապլոր դժգույն (*Muscari pallens*)
- Արքայածաղիկ բլրակային (*Fritillaria collina*)

Անդրկովկասի ենդեմիկներ

- Կտավախոտ Շելկովնիկովի (*Linaria schelkownikowii*)
- Արոսենի հայաստանյան (*Sorbus hajastana*)
- Բարակոտնուկ Ալբովի-լորնի (*Koeleria albovii* subsp. *loriensis*)
- Բարակոտնուկ Ալբովի- Ֆոմինի (*Koeleria albovii* subsp. *fominii*)≠



Եզևակոխ Կոզո-Պոլյանսկու



Արքայածաղիկ բլրակային



Բանպոտ Բրաունի



Կենի հատապտղային



Էպիպոգիում անտերև



Թեզիում փոլած

«Դիլիջան» ազգային պարկի տարածքում աճում են նաև Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ.

1. Սրոհունդ հայկական (*Hypericum armenum* Jaub. & Spach) (EN)
2. Վարդակակաչ գորտնուկային (*Anemone ranunculoides* L.) (EN)
3. Ճանճասպան կարմիր (*Amanita muscaria* (L.) Pers) (EN)
4. Դժգույն գարշասունկ (*Amanita phalloides* (Vaill.:Fr.) Secr.) (EN)
5. Աստերոֆորա անձրևային (*Asterophora lycoperdoides* (Bull.) Ditmar : Gray) (EN)
6. Բոլետոպսիս սև-սպիտակ (*Boletopsis leucomelaena* (Pers.) Fayod) (EN)
7. Սպիտակ սունկ, թնջուկ (*Boletus edulis* Bull.:Fr.) (EN)
8. Սատանայասունկ, դիվասունկ (*Boletus satanas* Lenz) (EN)
9. Կլավարիադելֆուս վարսանդավոր (*Clavariadelphus pistillaris* (Fr. : Fr.) Donk) (EN)
10. Ցիստոդերմա ամիանտային (*Cystoderma amianthina* (Scop.: Fr.) Fayod) (EN)
11. Ցանցակիր կրկնապատկված (*Dictyophora duplicata* (Bosc)E.Fisch) (EN)
12. Հապլոպորուս հոտավետ (*Haploporus odorus* (Sommerf.: Fr.) Bondartsev et Sing.) (EN)
13. Հելվելա սև (*Helvella atra* J.Kûenig) (EN)
14. Ոզնասունկ բուստանման, մարջանանման (*Hericium coralloides* (Scop.: Fr.) Pers.) (EN)
15. Ոզնասունկ փշոտ, կաղնու ոզնասունկ (*Hericium erinaceum* (Bull.: Fr.) Pers.) (EN)
16. Հովանոցասունկ կարմրող (*Macrolepiota rhacodes* (Vittad.) Singer) (EN)
17. Մերիպիլուս հսկա (*Meripilus giganteus* (Pers.: Fr.) P. Karst.) (EN)
18. Մուտինուս շնային (*Mutinus caninus* (Huds.: Pers.) Fr.) (EN)
19. Թիակիկ սովորական, մորկեղ գարշահոտ (*Phallus impudicus* L. : Pers.) (EN)
20. Ֆիլոտոպսիս բնավորող (*Phyllotopsis nidulans* (Pers.: Fr.) Singer) (EN)
21. Ռոդոտուս թաթաձև (*Rhodotus palmatus* (Bull.: Fr.) Maire) (EN)
22. Կոնասունկ փաթիլաոտիկ (*Strobilomyces strobilaceus* (Scop. : Fr.) Berk.) (EN)
23. Գետնասունկ ամառային, ուտելի (*Tuber aestivum* Vitt.) (EN)
24. Վոլվարիելա մետաքսանման (*Volvariella bombycina* (Schaeff. : Fr.) Singer) (EN)

Կենդանական աշխարհ. ազգային պարկի կենդանական աշխարհը հարուստ է, որը պայմանավորված է բազմազան էկոհամակարգերի առկայությամբ: Հանդիպում են հիմնականում լեռնանտառային, տափաստանային, մարգագետնային լանդշաֆտներին, ինչպես նաև ժայռերին և խոնավ տարածքներին բնորոշ կենդանատեսակներ:

Ազգային պարկի տարածքում հանդիպում են բզեզների (Coleoptera) 512 տեսակ, որոնք պատկանում են 44 ընտանիքների 296 ցեղերին: Այստեղ հայտնաբերվել է Հայաստանի բզեզների ողջ ֆաունայի 12%-ը, թիթեռների՝ շուրջ 50%-ը և մրջյունների՝ 25%-ը: Տարածքում հանդիպում են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված 15 տեսակ, որոնցից 6-ը գրանցված են նաև Բեռնի կոնվենցիայում (Հավելված 2) և 5-ը՝ ԲՊՄՄ Կարմիր ցուցակում: Նման միջատներից պարկի տարածքում հանդիպում են Հայաստանի՝ 7, Անդրկովկասի՝ 18 և Կովկասի էկոտարածաշրջանի՝ 30 էնդեմիկներ: Բզեզների ընտանիքների տեսակներից են՝ Գնայուկներ – Carabidae, Լեշակերներ – Silphidae, Սրամարմիններ – Staphylinidae, Թերթիկաբեղավորներ – Scarabaeidae, Սևամարմիններ – Tenebrionidae, Չատիկներ – Coccinellidae, Տերևակերներ – Chrysomelidae, Երկարաբեղիկներ – Cerambycidae, Երկարակնճիթներ կամ փղիկներ – Curculionidae և այլն:

Տերեկային թիթեռները ներկայացված են 7 ընտանիքների 68 ցեղերին պատկանող 122 տեսակներով՝ Հաստագլուխ թիթեռներ – Hesperidae, Կապտաթիթեռներ – Lycaenidae, Նիմֆալիդներ -Nymphalidae, Ճերմակաթիթեռներ – Pieridae և այլն:

Մրջյուններից (Formicidae) հայտնաբերվել է 10 ցեղերին պատկանող 29 տեսակ: Ազգային պարկի տարածքում հանդիպում են նաև 286 տեսակի ողնաշարավոր կենդանատեսակներ, որոնցից 53-ը ընդգրկված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում և 17-ը՝ ԲՊՄՄ Կարմիր ցուցակում:

«Դիլիջան» ազգային պարկի գետերում և լճերում բնակվում է 15 ձկնատեսակ, որնցից է Էնդեմիկ և Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում գրանցված Սևանի կողակը (Capoeta sevangi) (VU): Հանդիպում են նաև կարմրախայտը (Salmo trutta fario), արևելյան տառեխիկը (Alburnoides eichwaldii), Զուռի բեղլուն (Barbus lacerta cyri): Աղստևում տարածված են կովկասյան թեփուղը (Squalius cephalus orientalis), Զուռի լերկաձուկը (Oxyremacheilus (Barbatulla) brandti): Կլիմայավարժեցված տեսակներից են Պարզ լճում բնակվող արծաթափայլ կարասը (Carassius auratus gibelio), կարպը (Cyprinus carpio), ամուրյան նրբաձկնիկը (Pseudorasbora parva): Աղստև գետում հազվադեպ հանդիպում են մուրճին (Luciobarbus (Barbus) mursa), անդրկովկասյան սպիտակաձուկը (Alburnus filippii), Զուռի կողակը (Capoeta capoeta capoeta), ծիածառախայտը (Parasalmo mykiss):

Ազգային պարկի տարածքում հանդիպում են 4 տեսակի երկկենցաղներ՝ լճագորտը (Pelophilax ridibundus), փոքրասիական գորտը (Rana macrocnemis), կանաչ դոդոշը (Bufo viridis), Շելկովնիկովի սովորական ծառագորտը (Hyla arborea schelkownikowi):

Սողուններից հանդիպում են 1 տեսակի կրիա, 12 տեսակի մողեսներ և 9 տեսակի օձեր: 7 տեսակներ ընդգրկված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում, 6-ը՝ ԲՊՄՄ Կարմիր ցուցակում, 3 տեսակը՝ Անդրկովկասի, իսկ 2-ը՝ Կովկասի էնդեմիկ են: Ճանապարհամերձ ժայռերի վրա հանդիպում են Darevskia ցեղի ժայռային մողեսներից հայկական մողեսը (Darevskia armeniaca, D. dahl(EN), Դալի մողեսը և ռոստոմբեկովի մողեսը (i, D.

rostombekovi(EN)), որոնք Ասորկովկասի Էնդեմիկ տեսակներ են և գրանցված Է ՋՋ կենդանիների Կարմիր գրքում:

Կարմիր գրքյան տեսակներից են նաև.

1. Սիմպեկմա ճպուռ
(*Sympetma paedisca* (Brauer, 1877))



2. Կապույտ ճպուռ
(*Aeshna cyanea* (Mueller 1764))




3. Սանրաբեղ չրիկան
(*Ctenicera pectinicornis* (Linnaeus, 1758))



4. Հայկական ծաղկեփոշեկեր
(*Isomira armena* Khnzorian, 1976)



5. Ալպյան ռոզալիա
(*Rosalia alpina* (Linnaeus, 1758))



6. Մնեմոզինա կամ սև ապուլոն
(*Parnassius mnemosyne rjabovi* Sheljuzhko, 1935)



7. Ապուլոն (*Parnassius mnemosyne rjabovi* Sheljuzhko, 1935)



8. Գառնանգղ (Մորուքավոր անգղ)
(*Gypaetus barbatus* Linnaeus, 1758)



9. Քարաքծիկ (Aquila chrysaetos
(Linnaeus, 1758))



Հանդիպում են նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված Ռադդեի (D. raddei) և քուռի (D. portschinskii) մարգագետնային (D. praticola) (VU) մողեսներն, ինչպես նաև ճարպիկ մողեսը (Lacerta agilis), շերտավոր մողեսը (L. strigata), ջարդվող իլիկամողեսը (Anguis fragilis), ձիթապտղագույն սահևօձը (Platycephalus najadum), ջրային լորտուն (Natrix tessellata), ճահճային կրիա – Emys orbicularis, դեղնափորիկ-Pseudopus apodus, որդանման կույրօձ- Typhlops vermicularis և այլն:



Մարգագետնային մողես

«Դիլիջան» ազգային պարկում հանդիպում են թռչունների շուրջ 190 տեսակ, որոնցից 130-ը բնադրում են պարկում: Թռչունների 36 տեսակը գրանցված են Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում, 11-ն ընդգրկված են նաև Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում: Գրանցված է Կովկասյան մեկ էնդեմիկ տեսակ՝ կովկասյան մարեհավը (Tetrao mlokosiewiczzi) և Հայկական բարձրավանդակի էնդեմիկ մեկ տեսակ՝ հայկական որորը (Larus armenicus):

Այստեղ լայն տարածված են հորբալը (Columba oenas), անտառային աղավախ (Columba palumbus), փայտփորների վեց տեսակ՝ վիզգուկը (Jynx torquilla), եղնջաթռչնակը (Troglodytes troglodytes), անտառային նրբագեղիկը (Prunella modularis), արշալուսիկը (Erithacus rubecula), սովորական կարմրատուտը (Phoenicurus phoenicurus), երգող (T. philomelos) կեննեխները, ծնկլտան (Ph. collybita) գեղգեղիկները, երկնագույն (P. caeruleus) և մեծ (P. major) երաշտահավերը, ծվծվիկը (Certhia familiaris), անտառային կաչաղակը (Garrulus glandarius), անտառաբուն (Strix aluco) և ականջավոր բուն (Asio otus), անտառակտցարը (Scolopax rusticola), սովորական տատրակը (Streptopelia turtur), անտառային արտույտը (Lullula arborea), սևագլուխ դրախտապանը (Emberiza melanocephala), սպիտակավիզ (Actitis hypoleucos) կտցարները, հարավային սոխակը (Luscinia megarhynchos), կապտափող սոխակը (Luscinia svecica), լայնապոչ եղեգնաթռչնակը (Cettia cetti), առափնյա ծիծեռնակը (Riparia riparia), ճոճահավը (Remiz pendulinus), ներկարարը (Coracias garrulus), թխակապույտ աղավախ (Columba livia), տնային (P. domesticus) ճնճողիկները, կովկասյան մարեհավը (Tetrao mlokosiewiczzi), վայրի հնդկահավը կամ ուլարը (Tetraogallus caspius), սովորական կկուն (Cuculus canorus), կարմրակտուց ճայը (Pyrrhocorax pyrrhocorax) և այլն: Գիշատիչ թռչուններից այստեղ հանդիպում են օձակեր արծիվը (Circaetus gallicus), կրեսակերը (Pernis apivorus), սպիտակագլուղ անգղը (Gyps fulvus), ցախաքլորաորսը (Accipiter gentilis),

լորաճուռակը (*A. nisus*), մեծ ճուռակը (*Buteo buteo*), փոքր ենթաարծիվը (*Aquila pomarina*), գիշանգը (*Neophron percnopterus*), բվեճը (*Bubo bubo*) և գաճաճ արծիվը (*Hieraetus pennatus*):



Օձակեր արծիվ

Պարկը հանդիսանում է 286 տեսակի ողնաշարավոր կենդանիների կենսամիջավայր: «Դիլիջան» ազգային պարկի կաթնասունների զգալի մասը բնակվում են լայնատերև անտառներում և հատկապես անտառների բացատներում ու անտառների և մարգագետինների միջև ընկած տարածքներում: Ազգային պարկի տարածքում հանդիպում են 55 տեսակի կաթնասուններ, որոնցից 9-ը գրանցված են Հայաստանի

կենդանիների Կարմիր գրքում, 3-ը՝ ԲՊՄՄ Կարմիր ցուցակում: Առկա է նաև մեկ Էնդեմիկ՝ Անդրկովկասի և 7-ը՝ Կովկասի տեսակները: ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված են եվրոպական լայնական չղջիկը, սովորական երկարաթև չղջիկը և ջրասամույրը (NT): ՀՀ կենդանիների Կարմիր գրքում նշված են ազնվացեղ եղջերուն (CR), Շելկովնիկովի կուտորան, ջրասամույրը (EN), ասիական լայնական չղջիկը, սովորական երկարաթև չղջիկը, գորշ ականջեղ չղջիկը, անտառակատուն, գորշ արջը (VU) և լայնական ծալքաշուրտ չղջիկը (DD): Էնդեմներն են անդրկովկասյան կուրամկնիկը (Անդրկովկասի Էնդեմ), թփուտային դաշտամուկը, դեղնակուրծք մուկը, Շելկովնիկովի կուտորան, Ռադդեի, Սատունիևի և Վոլնուխիևի գորշատամները (Կովկասի Էնդեմներ):



Շելկովնիկովի կուտորան

Հանդիպում են նաև՝ սովորական դաշտամուկը (*Microtus arvalis*), անտառային քնամողը (*Dryomys nitedula*), մակեդոնական մուկը (*Mus macedonicus*), պարսկական կամ կովկասյան սկյուռը (*Sciurus anomalus*), անտառակատուն (*Felis silvestris silvestris*), լուսանը (*Lynx lynx*), գորշ արջը (*Ursus arctos*), այծյամը (*Capreolus capreolus*), վայրի խոզը (*Sus scrofa*), փոքր իրիկնաչղջիկը (*Nyctalus leisleri*), շիկակարմիր իրիկնաչղջիկը (*Nyctalus noctula*), եվրոպական

նապաստակը (*Lepus europaeus*), աղվեսը (*Vulpes vulpes*), գորշուկը (*Meles canescens*), աքիսը (*Mustela nivalis*), Ռադդեի գորշատամը (*Sorex raddei*), փոքր խլուրդը (*Talpa levantis*), գայլը (*Canis lupus*) և այլն:

Կլիմայավարժեցվում են նաև ուսուրական բծավոր եղջերուն, ազնվացեղ եղջերուն և վայրի խոզը:

Գործունեության տարածքում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդատեսակներ չկան:

Պատմամշակութային և բնության հուշարձաններ. ԴԱՊ-ի տարածքում կան ավելի քան 220 պատմական, հնագիտական և մշակութային վայրեր, որոնց մեծ մասը ներառված չեն զբոսաշրջային առաջարկներում՝ ֆիզիկական անմատչելիության պատճառով:

Աղյուսակ 1.

ԴԱՊ-ի մշակութային և պատմական արժեքները

Բնության հուշարձաններ	2
Քարե դարի հնագիտական վայրեր	3

Քարայր կացարան	9
Քաղաքատեղիներ	8
Գյուղատեղիներ	51
Ազգագրական տներ	2
Ամրոցներ	13
Կամուրջներ	4
Մետաղագործական համալիր	1
Եկեղեցիներ	4
Վանական համալիրներ	4
Մատուռներ	17
Խաչքարերի խմբեր	23
Առանձին խաչքարեր	26
Աղբյուր-հուշակոթողներ	4
Երկրորդ համաշխարհային պատերազմի հերոսներին նվիրված հուշարձաններ	2
Դամբարանադաշտ	2
Գերեզմանատներ	48

Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի «Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշման հավելվածի՝ Տավուշի մարզում գոյություն ունեցող բնության հուշարձաններից՝ «Մոլլաքար» ժայռ, «Անանուն» պլագիոգրանիտներ, «Անանուն» դայկայանման մարմիններ, «Անանուն» փոխակերպարային (մետամորֆիզացված) թերթաքարեր, Կալաքար» լեռ, «Անանուն» սյունաձև էքստրուզիվ մարմին, «Անանուն» դայկայանման մարմիններ, «Փայտասար» քարանձավների համալիր, «Անանուն» կվարցային դիորիտներ և գաբրո-դիորիտ, «Անանուն» շերտագրական մերկացում, «Անանուն» սանդղափուլ քարափներ, «Օձաքար» լեռնագագաթ գործունեության և Կենսաբանական հուշարձաններից՝ «Նոյեմբերյանի սոսի», Վարդան Մամիկոնյանի կաղնի», «Սարի գյուղի սոսի», «Գետահովիտի մամռապատ ժայռ» «Տանձուտ» տարածքում բացակայում են:

Բնության ժառանգություն. բնության ժառանգության տարածքներ են համարվում նաև Աղավնավանքի կենու պուրակը, Հաղարծնի հաճարենու և Խաչարձանի կաղնու անտառները, Պարզ և Գոշի (Տգրկա) լճերը:

9. Նախատեսվող գործունեության բնութագիրը և տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի «Դիլիջան»ԱՊ-ի՝ դեպի Պարզ լիճ տանող ճանապարհին հարակից երկու հողամասերում: Հողամասերի ընդհանուրը մակերեսը կազմում է 5213մ²: Նախատեսվող գործունեության ենթակա տարածքներում քանդման, ապամոնտաժման կամ տեղափոխման աշխատանքներ չեն նախատեսվում: Տարածքը ցանկապատված չէ: Տարածքի կառուցապատումն իրականացվելու է այնպիսի կյուրերով, որոնք չեն վնասի շրջակա միջավայրին: Բոլոր կառուցապատման լուծումները կլինեն համահունչ և ներդաշնակ գոյություն ունեցող լանդշաֆտին և բնությանը, չխաթարելով տարածքի էկոհամակարգը և հարակից շրջակա միջավայրը:

9.1 Նախատեսվող գործողության նկարագիրը և տեխնիկատեխնոլոգիական լուծումները. «ՀԱՅԿ ԵՎ ՌԱՖԱՅԵԼ» ՍՊ ընկերությանը տրամադրված նախատեսվող գործունեության 2983մ² ընդհանուր մակերեսով հողատարածքը գտնվում է Դիլիջանի Պարզ լիճ տանող ճանապարհին հարող հատվածում(մոտ 30մ), որտեղից էլ լինելու է տրանսպորտային միջոցների և մարդկանց մուտքը հանգստյան գոտի: Համաձայն նախագծային լուծումների՝ նշված տարածքում կառուցվելու է 2 հատ երկհարկանի քրթեջ, ռեստորանային մասնաշենք(ճաշարան), 5 հատ բացօթյա տաղավարներ (որից 1-ը մանկական խաղահրապարակ), գլխավայր տնակ՝ տաղավար, գիշերակացի սենյակներ (6 համար), պահակատուն :

Նախատեսվող գործունեության 2230մ² ընդհանուր մակերեսով տարածքը ևս գտնվում է Դիլիջանի Պարզ լիճ տանող ճանապարհի հարող հատվածում: Տարածքի մուտքը լինելու է Ազգային պարկի անտառմիջյան գրունտային ճանապարհով: Համաձայն նախագծային լուծումների՝ նախատեսվում է նշված հատվածի հանգստի գոտու կառուցապատում՝ 3 տիպի երկհարկանի քրթեջներով (7 հատ):

- Կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմելու է 1152մ² , որից.
- 9 հատ քրթեջ՝ 486մ²,
- ճաշարան՝ 248մ²,
- 5 հատ բացօթյա տաղավարներ՝ 280մ² ,
- գիշերակացի սենյակներ՝ 138մ²:

Տեղադրվող շինությունների հիմքերը լինելու են բետոնյա հիմքերով, հավաքվելու են մետաղյա և փայտյա համադրության կոնստրուկցիաներով: Նախատեսվող մանկական խաղահրապարակը(160մ²) լինելու է ծածկով, ըստ սեզոնի հանվող պատուհաններով: Խաղահրապարակի մի մասը լինելու է արհեստական խոտածածկ, մի մասը՝ կարմիր ավազ: Երեխաների ժամանցի համար տեղադրվելու են ատրակցիոններ:

Համաձայն նախագծի՝ շինությունների թույլատրելի առավելագույն բարձրությունը սահմանված է մինչև 7մ:

Շինությունների արտաքին դիզայնում օգտագործվելու են փայտ, բնական ջարդվածքով քարի շարվածք, աղյուս և այլն: Շինությունների տանիքները լինելու են կղմինդրային՝ միագույն կանաչ: Ապահովված են լինելու անձրաջրերի հեռացման կազմակերպված համակարգով:

Նախատեսվող գործունեության իրականացումը տևելիւ է առավելագույնը 24 ամիս:

ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻ ԴԻԼԻԶԱՆ ԱՉԳԱՅԻՆ ՊԱՐԿ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՍՅԵ՛ Մարզ Տավուշ, համայնք Դիլիյան քաղաք Դիլիյան
«Դիլիջան» տեղ.1-ի քառ. 9 անտառամաս

1-ին հողակտոր 0,2982 հա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՆԱԽԱՏԵՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ																								
	3000	3001	3002	3003	3004	3005	3006	3007	3008	3009	3010	3011	3012	3013	3014	3015	3016	3017	3018	3019	3020	3021	3022	3023	3024
1 ՆԱԽՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	■																								
2 ՇԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	■	■																							
3 ԲԱՎՅՈՒՆ ԲԱՆՆԱԿԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ ԼՈՒՎ ԽԱՐԱԾՔՈՒՄ			■	■																					
4 ԲԱՎՅՈՒՆ ԴԱՌՈՅՑՈՒՄ, ՏՈՓՆԱԼՈՒՄ ԶԱՓՈՒՅՐՈՒՄ				■	■																				
5 ԴԻՄՔԵՐԻ ՓՈՍՈՐԿՎԵՐԻ ԲԱՆՆՈՒՄ					■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
6 Երկու քոթեջների մետաղական կոնստրուկցիաների ԻՐԱԿԱՆԱԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
7 Ճաշարանի և այլ շենքերի մետաղական կոնստրուկցիաների ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ							■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
8 ՆԵՐՔԻ ԿՈՆՍՏՐԱԿՑԻՈՆ ԳՇԵՐԻ ՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ								■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
9 ԱՐՏԱԵՆ ԿՈՆՍՏՐԱԿՑԻՈՆ ԳՇԵՐԻ ՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ									■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■	■
10 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՆԵՍՊԱՏՈՒՄ պայտով և դեկորատիվ քարերով																					■	■	■	■	■
11 ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ, Ճանապարհների կառուցում բնական սալախատանով																						■	■	■	■
12 ԱՐՏԱԵՆ ԵՎ ՆԵՐՔԻ ԼՈՒՍՎՈՐՈՒԹՅՈՒՆ																							■	■	■


ՇԻՆ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՒՄ Է 24 ԱՄԻՍ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ ԴԻԼԻԶԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՍՑԵ՝ Մարզ Տավուշ, համայնք Դիլիյան քաղաք Դիլիյան «Դիլիջան» տեղ.1-ի քառ. 9 անտառամաս

2-րդ հողակտոր 0,223 հա



ՇԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՒՄ Է 24 ԱՄԻՍ

Գործունեության կատարման շինարարության ժամանակաշրջանում օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ. ամբարձիչ, էքսկավատոր, կռունկ, բեռնատար և ինքնաթափ մեքենաներ: Վերջիններս լինելու են կապալառու կազմակերպության մեքենաները: Մեքենաների կայանման վայրեր չեն նախատեսվում, քանի որ մեքենաներն աշխատելու են ըստ պահանջի և կայանվելու են գործունեության տարածքին կից՝ ճանապարհի եզրին:

Շահագործման փուլում գործունեության տարածքում առանձին ավտոկայանատեղի չի նախատեսվում: Մեքենաները կայանվելու են հանգստյան գոտու տարածքում:

Հանգստյան գոտու էլեկտրամատակարարումը (շինարարության և շահագործման փուլ) կատարվելու է գոյություն ունեցող էլեկտրամատակարարման պայմանագրի՝ «ՀԷՑ» ՓԲԸ-ի Դիլիջանի ցանցից: **Հավելված 8.**

Շահագործման փուլում հանգստյան գոտին ունենալու է զազամատակարարման համակարգ, զազիֆիկացվելու է համաձայն՝ «ՀԱՅԿ ԵՎ ՈԱՖԱՅԵԼ» ՍՊԸ և «Գազ-Արդ-Շին» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի՝ տեխնիկական պայմանի: **Հավելված 9.**

Հանգստյան գոտում քրթեջների և այլ շինությունների ջեռուցումը կատարվելու է ջեռուցման համակարգով, յուրաքանչյուր քրթեջում և շինությունում տեղադրվելու են համապատասխան հզորության գազով աշխատող ջեռուցման կաթսաներ:

Տեղադրվելու են նաև լուսավորության, օդափոխության, հրդեհաշիջման համակարգեր: Տարածքում հանգստացողների և զբոսաշրջիկների ճիշտ կողմնորոշվելու համար՝ տեղադրվելու են ուղղեցույց վահանակներ:

Նախատեսվող գործունեության նախագիծը կազմվել է ՀՀ-ում գործող նախագծային և շինարարական նորմերին համապատասխան: Նախագծային լուծումներում ապահոված են հակահրդեհային պահանջները՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան:

Հանգստյան գոտին ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են ՀՀՇՆ IV11.07.01-2006 (ՄՍՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժության խմբերի համար» շինարարական նորմերի և ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ.սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-0 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

10. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.

Շինարարության փուլում նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում բնական ռեսուրսներից օգտագործվելու են բնական գազ և ջուր:

Գործունեության տարածքը գազիֆիկացվելու է: Այդ նպատակով նախատեսվում է տարածքով անցկացնել 348 գծմ ընդհանուր երկարությամբ ստորգետնյա գազատար խողովակներ: Խողովակաշարի անցկացման արդյունքում կատարվելու է 139մ³ ծավալի հողային աշխատանքներ:

10.1 Ջրային ռեսուրսներ. Ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու ջրի և կենցաղային կարիքները հոգալու համար: Շինարարության և շահագործման փուլերում աշխատողների համար խմելու ջուրը կբերվի ջրի ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Այդ նպատակով տեղադրվելու 27,0 մ³ ծավալով, 3,0x3.0 և H=3.0մ խորության ներքին չափերով ստորգետնյա, երկաթբետոնյա մեկ ջրամբար՝ թմբապատված, մտոցով և պարզեցված օդակլանիչ ֆիլտրով: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի:

Տարածքում անցկացվելու է 635 գծմ ընդհանուր երկարությամբ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ: Խմելու ջրի ջրամատակարարման ներտարածքային բաշխիչ ցանցը /340գծմ/ լինելու է ստորգետնյա՝ պոլիէթիլենային բարձր խտության (HDPE) տիպի խողովակներով, պահպանելով գործող չափորոշիչները և գրունտի սառեցման խորությունը:

Արտաքին հրդեհամարման համար նախատեսվում է հրդեհաշիջման առանձին համակարգ, որի համար տեղադրվելու են ջրի 2 երկաթբետոնե տարողություններ (ջրամբարներ)՝ յուրաքանչյուրը՝ 70մ³ տարողության՝ 2 պոմպերով (1 աշխատող, 1-ը՝ պահուստային): Ջրային տարողությունները լինելու են ստորգետնյա՝ 4,0x6.0 չափերի, տեղադրվելու են H=3.0մ խորության վրա: Ջրավազանների ծավալները հաշվարկված է հաշվի առնելով արտաքին հրդեհի մարման ջրապահանջը՝ 5լ/վրկ: Այդ նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Տեխնիկական ջուրն օգտագործվելու է տեխնիկական, հրդեհաշիջման և անհրաժեշտության դեպքում տարածքի կանաչապատ հատվածների ոռոգման նպատակով:

Շինարարության փուլում աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

Որտեղ՝ n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է

N - ջրածախսի նորման՝ 0.016մ^3 ,

n_1 - բանվորների թիվն է,

N_1 - ջրածախսի նորման բանվորների համար՝ $0.025 \text{մ}^3/\text{մարդ օր}$

T -աշխատանքային օրերի առավելագույն թիվն ամբողջ շինարարության ժամանակ՝ 24 ամիս՝ 528 օր:

Այսպիսով.

$$W = (2 \times 0.016 + 8 \times 0.025) \times 528 = 122,5 \text{մ}^3/\text{շին.ժամ, միջին օրական } 0.232 \text{մ}^3:$$

Շահագործման փուլում աշխատողների (35 սպասարկող) և հանգստացողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է ելնելով առանձին լոգարաններով հյուրատներում 1 հանգստացողի/աշխատողի ջրօգտագործման առավելագույն ծախսից.

$$V_y = n \times 230 \text{լ}$$

Որտեղ՝ n - հանգստացողների/աշխատողների թիվն է՝ 100


Այսպիսով.

$$V_y = 100 \times 23 = 23.000 \text{լ/օր}$$

Մեկ օրվա կտրվածքով ընդհանուր ջրօգտագործումը առավելագույն թվով հանգստացողների համար կկազմի $23 \text{մ}^3/\text{օր}$:

10. 2 Կեղտաջրերի հեռացում. շինարարության փուլում տեղադրվելու է 90×90 չափերի 2 շարժական բիոզուգարան: Բիոզուգարանները տեղադրվելու է վարձակալության հիմունքով և աշխատանքների ավարտից հետո հանվելու են: Վերջիններիս մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքուևներով:

Շահագործման փուլում նախատեսվում է տարածքում տեղադրել 2 բլոկային համակարգով, ընդհանուր 2080 կգ քաշով, 3,3մ երկարությամբ, 2,2մ լայնությամբ և 3,1մ բարձրությամբ ТОПАС-100 տիպի՝ երաշխավորված կենսաբանական մաքրման կայան, որն ապահովելու է օրական 16,0մ³ ծավալով (Q=16.0մ³/օր) կենցաղային կեղտաջրերի եռաստիճան մաքրում՝ մինչև 98%:



Նկար 4.

Շահագործման փուլում կեղտաջրերը շինություններից բակային ներքին ինքնահոս ցանցով ուղղվելու են դեպի մաքրման կայան: Կայանը բաղկացած է հետևյալ բլոկներից.

- ընդունիչ խուց,
- աերացիայի բլոկ,
- պարզեցման բլոկ,
- տիղմի խտացման բլոկ:

Մաքրված կեղտաջրերը բացարձակապես անվտանգ են շրջակա միջավայրի համար և չունեն տհաճ հոտ:

Կեղտաջրերի մաքրումից հետո կենսաբանական մաքրման կայանի ելքում ցուցանիշները կլինեն նորմերին համապատասխան՝ թԿՊ20 10-20 մգ/լ սահմաններում, թԶՊ 70-100 մգ/լ, N և NH4 իոնների պարունակությունը 15-20 մգ/լ: Կոյուղու ներտարածքային ցանցը իրականացվելու է պոլիէթիլենային ծալքավոր SN8 տիպի խողովակներից՝ ռետինե սեղմիչ օղակներով և դիտահորերով: Ճիշտ շահագործման դեպքում այն կարող է աշխատել երկար ժամանակ՝ մոտ 50 տարի:

Մաքրված ջրերը ջրահեռացման ներքին ինքնահոս ցանցով՝ 295գծմ երկարության ստորգետնյա խողովակներով հեռացվում են դեպի տարածքին կից գոյություն ունեցող ջրահեռացման համակարգ:

Կուտակված չեզոք տիղմը, որը բաղկացած է անօրգանական միացություններից (մասնավորապես նիտրատներից և ածխաթթու գազից) պարբերաբար հեռացվում է (տարին 2 անգամ) համապատասխան ծառայությունների միջոցով՝ պայմանագրային հիմունքներով:

Ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքները կատարվելու են ՀՀՇՆ 40-01.01-2014՝ «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում», ՇՆուԿ 2.04.02-84՝ «Ջրամատակարարում, արտաքին ցանցեր և շինություններ», ՇՆուԿ 2.04.03-85՝ «Կոյուղու արտաքին ցանցեր և կառուցվածքներ» նորմերին համապատասխան:

10. 3 Նյութեր. շինարարության ընթացքում օգտագործվելու են փայտ, բնական քար, կղմինդր, աղյուս, բետոնանյութ և այլն: Բետոնն օգտագործվելու է շինությունների հիմքերի ամրացման համար: Այն բերվելու է մասնագիտացված կազմակերպություններից՝ պատրաստի վիճակում, համապատասխան բետոնախառնիչներով՝ ըստ պահանջի:

Շինարարության փուլում գործունեության տարածքում արտադրական հրապարակ չի նախատեսվում: Տեղադրվող կոնստրուկցիաները՝ ամբողջական (դռներով, պատուհաններով) բերվելու են պատրաստի վիճակում և անմիջապես տեղադրվելու են: Շինանյութերի կուտակում ևս չի նախատեսվում, քանի որ վերջիններս բերվելու են հաջորդաբար՝ ըստ պահանջի: Գործունեության իրականացման ժամանակ առաջացած ավելցուկային նյութերը տարածքում չեն կուտակվելու և նույն մեքենաներով Կապալառուի կողմից հետ է վերադարձվում:

10.4 Հողային ռեսուրսներ. նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է 990,65մ³ ծավալի հողային աշխատանքներ: Հողային զանգվածն առաջանալու է քրթեջների հիմքերի փորման(132մ³/, ջրամատակարարման(164մ³/ և ջրահեռացման(293մ³/, գազամատակարարման խողովակների անցկացման(139մ³/, մաքրման կայանի(26մ³/, խմելու և կենցաղային կարիքների /31.05մ³/, հրդեհաշիջման համար նախատեսվող ջրային տարողությունների(ջրամբար՝ 165.6մ³/ տեղադրման, ցանկապատի կառուցման (40մ³/աշխատանքներից:

Հողային զանգվածից առանձնացվելու է 219.25մ³ բուսահողը: Հողային զանգվածը՝ 771,4մ³ կուտակվելու է տարածքում՝ կատարվող փորվածքների/հիմքեր/ մոտ և շինությունների տեղադրումից հետո օգտագործվելու է հետլիցքի և հարթեցման համար: Փորվածքները կատարվելու են հաջորդաբար, քանի որ կառույցները բերվելու և տեղադրվելու են հերթականությամբ: Հողային աշխատանքների կատարման ժամանակ հողաբուսաշերտը պահվելու է տարածքում առանձնացված վայրում՝ ծածկված է համապատասխան անջրթափանց թաղանթով: Բնահողը օգտագործվելու է տարածքի բարեկարգման և կանաչապատման համար:

10. 5 Կենսաբազմազանություն.

Բուսական աշխարհ. գործունեության ենթակա տարածքը ծառապատ է: Տարածքում առկա են թվով 84՝ արևելյան հաճարենի, թխկի, կեռասենի անտառային, վրացական կաղնի և այլ ծառատեսակներ: Ծառերը հիմնականում հաստաբուն տեսակներն են՝ վրացական կաղնին (*Quercus iberica*) և թխկի սրատերևը (*Acer platanoides*), իսկ մնացած տեսակներն ավելի երիտասարդ են՝ 20-30 սմ տրամագծերով:

Ենթանտառը հիմնականում բացակայում է, անտառային տիպը՝ թույլ արտահայտված տարախոտային:

Կենդանական աշխարհ. գործունեության ենթակա տարածքը գտնվելով գործող ճանապարհին կից, արդեն ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների: Ներգրավված մասնագետի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ տարածքում չկան կենդանիների բնադրավայրեր:

Գործունեության ենթակա տարածքներում Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ չկան:

Գործունեության իրականացման ընթացքում ծառահատումներ չեն կատարվելու: Շինությունների տեղադրման լուծումները նախագծվել են, հաշվի առնելով տարածքում առկա ծառերի պահպանման պահանջը:

10.6 Թափոնների առաջացում. նախատեսվող գործունեության կատարման ժամանակ շինարարական աղբ չի առաջանալու, քանի որ ավելացված նյութերը Կապալառու կազմակերպությունն ամենօր հետ է տեղափոխելու, իսկ տեղադրվող կոնստրուկցիաները Կապալառու կազմակերպությունը բերելու է պատրաստի վիճակում և անմիջապես տեղադրելու է: Օգտագործվող նյութերը մատակարարվելու է ըստ օրվա պահանջի:

Շինարարության և շահագործման փուլերում առաջանալու է միայն կենցաղային թափոններ՝ աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4)՝ համապատասխանաբար 1.200կգ/տարի կամ 2.400կգ ողջ շինարարության ընթացքում և 36 տոննա/տարի շահագործման փուլում:

Շինարարության փուլում կենցաղային աղբը կուտակվելու է պոլիէթիլենային պարկերի մեջ, որն ամենօր հեռացվելու է տարածքից: Շահագործման փուլում առաջացող կենցաղային աղբը կուտակվելու է տարածքում տեղադրվող 4 հատ 1,1մ³ տարողության համապատասխան աղբի տարրաներում: Այն պարբերաբար հեռացվելու է մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով՝ համայնքապետարանի համաձայնությամբ:

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի
n – աշխատողների թիվն է,
հետևաբար,

$$M=10*120=1.200\text{կգ/տարի},$$

Սակայն շինարարությունը տևելու է 24 ամիս, հետևաբար,

$$M=1.200*2=2.400\text{կգ շինարարության ժամանակ՝ օրական 3,9կգ:}$$

Շահագործման փուլում կենցաղային աղբի ծավալը կկազմի.

$$M=(100)*360=36.000\text{կգ/տարի (36տոննա/տարի) կամ 100կգ/օր:}$$

10.7 Սոցիալական. շինարարության ժամանակ աշխատելու են 10 մարդ, որից 2 ինժեներ՝ մասնագետներ և բանվորներ՝ 8 մարդ: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով: Աշխատողների համար տեղադրվելու է ժամանակավոր շարժական տնակ՝

աշխատողների կենցաղ-սանիտարական պայմանները ապահովելու, ինչպես նաև հանգստի կազմակերպման համար:

Շահագործման փուլ. շահագործման փուլում ներգրավելու են 30-35 մարդ: Հանգստի գոտում հանգստացողների և աշխատողների առավելագույն ծանրաբեռնվածությունը կարող է հասնել մինչև 100 մարդ/օր:

Ծրագրի իրականացման համար նախատեսվում է ներդնել 350.0մլն ՀՀ դրամ:

Ընկերությունը նախատեսում է նաև համայնքի նկատմամբ պարտավորության շրջանակներում կատարել շրջակա տարածքում տեսախցիկների տեղադրման և լուսավորության անցկացման աշխատանքներ:

10.8 Բարեկարգում. նախատեսվող գործունեության շինարարական փուլի ավարտից հետո կատարվելու է ամբողջ տարածքի բարեկարգում և ցանկապատում: Տարածքը մաքրվելու է ավելորդ աղբից և վերականգնվելու է լանդշաֆտը: Տարածքում կատարվելու է 402մ² մակերեսով ներտարածքային ճանապարհ՝ սալիկապատման տեսքով:

Ցանկապատը լինելու է մետաղական ցանցով և հավաքված ճաղաշարով՝ 354 մ ընդհանուր երկարությամբ: Ցանկապատը անցկացվելու է 1.1 խորությամբ տեղադրվող մետաղական ուղղանկյուն խողովակե կանգնակների միջոցով:

Նախատեսվում է գործունեության ենթակա տարածքում՝ 3658մ² ազատ տարածքի վրա կատարել կանաչապատման (խոտածածկման) աշխատանքներ՝ ցանքս: Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է վերգետնյա պլաստիկե խողովակներով (ցնցուղային)՝ գոյություն ունեցող ոռոգման համակարգից:



Նկար 5.



Նկար 6.

Ոռոգման նպատակով ջրապահանջը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$W = (C \times 15) \times c$$

Որտեղ,

C – կանաչապատման ենթակա տարածքն է ըստ կանաչապատման տեսակային կազմի՝ ցանքս

c – ոռոգման հաճախականությունը կախված սեզոնից

հետևաբար,

$$W = (3658 \times 15) \times 32 = 1.756 \text{ մ}^3 \text{ ջուր տարվա կտրվածքով:}$$

11. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը.

Նախատեսվող գործունեության շրջանակներում ծառահատումներ չեն կատարվելու: Հանգստյան գոտու նախագծային լուծումներն, ինչպես նաև քոթեջների տեղադրումը նախատեսված են այնպես, որպեսզի շրջանցվեն ծառերը և չվնասվեն տարածքում առկա ծառերը և թփերը:

Գործունեության իրականացման ենթակա տարածքը գտնվում է Պարզ լիճ տանող ճանապարհի հարակից հատվածում, որն արդեն իսկ որոշակի ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների: Տարածքի կառուցապատումն իրականացվելու է այնպիսի նյութերով, որոնք չեն վնասի շրջակա բնությանը: Բոլոր կառուցապատման լուծումները կլինեն այնպիսին, որպեսզի լինեն համահունչ և ներդաշնակ գոյություն ունեցող բնությանը և լանդշաֆտին՝ չխաթարելով տարածքի էկոհամակարգը և հարակից շրջակա միջավայրը: Կիրականացվեն կանաչապատման աշխատանքներ:

Ազգային պարկի ներկայիս հնարավորությունների օգտագործումը՝ ներքին այցելուներին և օտարերկրացի զբոսաշրջիկներին հյուրընկալելու առումով, կնպաստի Դիլիջանի զբոսաշրջային հնարավորությունների զարգացմանը:

Գործունեության իրականացումն ունենալու է տարածաշրջանի համար որոշակի դրական ազդեցություն, քանի որ հանգստյան գոտու կազմակերպումը կխթանի Էկոտուրիզմի, զբոսաշրջության զարգացմանը, հետևաբար և բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը (35 աշխատատեղ և հարակից բնակչության եկամուտների ավելացում):

Շինարարական աշխատանքները կրելու են կարճաժամկետ բնույթ: Տեղադրվող կառույցները լինելու են մետաղյա և փայտյա կոնստրուկցիաներով: Ուստի գործունեության իրականացման հետևանքով հնարավոր ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Գործունեության իրականացումն առաջացնելու է լանդշաֆտի որոշակի ծանրաբեռնվածություն: Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական

ազդեցությունների մեղմանն ուղղված նախատեսվող միջոցառումների ճիշտ կիրառման արդյունքում՝ հնարավոր ազդեցությունները կլինեն նվազագույնը:

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատելու ընթացքում հողային և ջրային ռեսուրսների մեջ յուղերի հնարավոր ներթափանցման, տարածքի կենսաբազմազանության պահպանման, ՀՀ Կարմիր գրքերում հաշվառված բուսական և կենդանական տեսակների հայտնաբերման, դրանց պահպանման հետ:

Միջոցառումներում հաշվի են առնվել նաև հանրապետությունում կորոնավիրուսային համավարակով պայմանավորված իրավիճակը, շինարարական հրապարակներում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) կանխարգելմանն ուղղված պայմանների ապահովումը:

11. 1 Օդային ավազան. գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան հնարավոր արտանետումները լինելու են ավտոտրանսպորտի շահագործումից՝ ծխազագերի տեսքով և կատարվող հողային աշխատանքների ժամանակ՝ փոշու արտանետումների տեսքով:

Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվելու է.

- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը,

- տրանսպորտային միջոցների շարժը կազմակերպվելու է հերթականությամբ, որպեսզի չխոչընդոտի տրանսպորտի երթևեկությունը,

- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում օգտագործվող նյութերի և թափոնների քանակը, նյութերը պահվելու են ծածկված վիճակում՝ փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար,

- բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը:

11.2 Հողային ռեսուրսներ. գործունեության իրականացման հետևանքով կատարվելու են 990,65մ³ ծավալի հողային աշխատանքներ, որի արդյունքում առաջանալու է 219,25մ³ ծավալի բնահող: Հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունները և վերջինիս մեջ վտանգավոր նյութերի և թափոնների ներթափանցումը կանխելու նպատակով նախատեսվում է.

- կատարվելու է հողային զանգվածի հավաքում և առանձնացում բնահողից,

- նախատեսվող գործունեության շինարարության փուլում հողային հանույթից առաջացած բնահողը պահվելու է տարածքում,

- հողաբուսաշերտի պահպանումը կատարվելու է համաձայն՝ ՀՀ կառավարության 02.11.2017 թվականի «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները» N 1404-Ն որոշման դրույթներին համապատասխան,

- հնարավորինս բացառվելու է տարածքում առկա բուսահողի վրա հնարավոր ազդեցությունները՝ թափոններով և կեղտաջրերով աղտոտումը,

- բուսահողը ժամանակավորապես պահվելու է տարածքի առանձնացված վայրում, թմբերի տեսքով՝ ծածկված անջրթափանց թաղանթով,

- շինարարական աշխատանքների ավարտից հետո բուսահողն օգտագործվելու է տարածքի բարեկարգման և կանաչապատման նպատակով,

- բուն գործունեության տարածքում յուրի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր չեն նախատեսվում,

- նվազագույնի է հասցվելու բաց փորվածքների քանակությունը և վերջիններիս հետլիցքն իրականացվելու է հնարավորինս կարճ ժամկետներում,

- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում:

11.3 Ջրային ռեսուրսներ. գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցություններ չեն նախատեսվում, քանի որ.

- տարածքում չկան մակերևութային ջրային ռեսուրսներ և գրունտային ջրեր,

- շինարարության և շահագործման փուլերում աշխատողների խմելու և կենցաղային նպատակների համար օգտագործվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կկատարվի համայնքում գործող մասնագիտացված կետերում:

Հողային և ջրային ռեսուրսները կեղտաջրերի աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվելու է.

Կեղտաջրերի հեռացման համար.

- **շինարարության փուլում**՝ շարժական բիոզուգարանի տեղադրում՝ վարձակալության հիմունքներով, որը աշխատանքների ավարտից հետո հանվելու է,

- բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

-**շահագործման փուլում**՝ տեղադրվելու է 2 բլոկային համակարգով ТОПА3-100 տիպի՝ երաշխավորված կենսաբանական մաքրման կայան, որն ապահովվելու է օրական 16,0մ³ ծավալով (Q=16.0մ³/օր) կենցաղային կեղտաջրերի եռաստիճան մաքրում,

- կեղտաջրերի մաքրումից հետո կենսաբանական մաքրման կայանի ելքում ցուցանիշները կլինեն՝ ԹԿՊ20 10-20 մգ/լ, ԹՔՊ 70-100 մգ/լ, N և NH4 իոնների պարունակությունը՝ 15-20 մգ/լ սահմաններում և կունենան նորմերին համապատասխանություն:

11. 4 Կենսաբազմազնություն.

Գործունեության ենթակա տարածքում համապատասխան մասնագետի կողմից կատարվել է ուսումնասիրություն: Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, ինչպես նաև կենդանիների բնադրավայրեր չեն հայտնաբերվել:

ԱՊ-ի բուսական աշխարհի պահպանման նպատակով նախատեսվելու է.

- գործունեության տարածքում ընկերության կողմից պարբերաբար կատարվելու է մոնիթորինգ առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից,

- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը տեղեկացնելու է «Դիլիջան»ԱՊ-ին,

- բուսատեսակները տեղափոխելու և վերատնկելու համար առանձնացվելու է հատուկ պահպանման գոտի՝ ԱՊ-ի համաձայնությամբ,

- կանաչապատված տարածքի խոտածածկի պահպանման և բուսականության բարձր աճն ապահովելու համար իրականացվելու են մշտադիտարկումներ,

- բացառվելու են վնասատուների դեմ պայքարի նպատակով թունանյութերի և այն քիմիական նյութերի օգտագործումը, որոնք ամրագրված են Կառավարության 2005 թ.-ի մարտի 17-ին կայացրած N-293 որոշման մեջ,

- բացառվելու են ծառահատումները, բնական ռելիեֆի արհեստական փոփոխությունը:

11. 5 Թափոններ. գործունեության իրականացման շինարարության փուլում

շինարարական թափոններ չեն առաջանալու, քանի որ տարածքում շինանյութերի կուտակում չի նախատեսվում: Բոլոր ավելացած շինանյութերը Կապալառուի կողմից հետ են տարվում: Իսկ բոլոր տեղադրման ենթակա շինությունները(կոնստրուկցիաներ) բերվելու են պատրաստի վիճակում և անմիջապես տեղադրվելու են: Առաջանալու են միայն կենցաղային թափոններ, որի համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ շրջակա միջավայրը և գործունեության տարածքը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից,

- շինարարության փուլում առաջացած կենցաղային աղբը հավաքվելու է համապատասխան տարողությունների՝ պոլիէթիլենային պարկերի մեջ և ամեն օր Կապալառուի կողմից հեռացվելու է տարածքից,

- շահագործման փուլում կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում տեղադրված աղբարկղերի մեջ և հատուկ աղբահավաք ծառայությունների կողմից մեքենաներով տեղափոխվելու է նախատեսված աղբավայր՝ կենցաղային աղբի տեղափոխման պայմանագրի կնքումից հետո,

- բացառվելու է այլ տարածքների օգտագործումը առանց համապատասխան թույլտվության,

- բացառվելու է աղբի կուտակումը շինարարակից դուրս՝ հասարակական տարածքում:

11.6 Աղմուկ և թրթռում. շինարարության ընթացքում աղմուկը և թրթռումները կապված են լինելու սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- կատարվող աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,

- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում,

- պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տրանսպորտային միջոցների շարժիչները:

11. 7 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն. շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-0 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

-աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլ),

- շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ.հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ,

- աշխատողների համար հատկացվելու է ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ), որն ապահովված է լինելու լվացարանով, համապատասխան կահույքով, տաքացման և հովացման համակարգերով և այլն,

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են պատնեշների և շրջանցող ուղիների, ինչպես նաև զգուշացնող նշաններ՝ մարդկանց և զբոսաշրջիկներին հնարավոր վտանգների մասին նախազգուշացնելու համար,

- շինհրապարակն ապահովված է լինելու կրակմարիչներով,

- տեղադրվելու են համապատասխան տարողության ջրի բաքեր՝ հրդեհաշիջման աշխատանքների ապահովման համար,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են,

- վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները,

- նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողությունները, ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունը,

- պահպանվելու է աշխատողների միջև սոցիալական հեռավորությունը, պարտադրվելու է դիմակների կրումը:

Շահագործման փուլ.

-հանգստի համալիրն ապահովված է լինելու արտաքին լուսավորության, օդափոխության, ծխահեռացման համակարգերով, տեսախցիկներով, հակահրդեհային միջոցներով՝ հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով,

